Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

8012

# ԶԵԿՈՒՑՈՒՄ

## ՊՕՂՈՍԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԿՍԵՌ ՎԱՐԺԱՐԱՆԻ

## ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ

**1925 - 1926**

ՏԱՐԻԱՑ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ

---

ԳԱՀԻՐԷ
ՏՊԱՐԱՆ «ՅՈՒՍԱԲԵՐ»
1926

373
Զ-52

373
Զ-52
13 APR 2013
0120-10
493

# ԶԵԿՈՒՑՈՒՄ

## ՊՕՂՈՍԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԿՍԵՌ ՎԱՐԺԱՐԱՆԻ

### ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ

**1925 - 1926**

ՏԱՐԻԱՅ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ

---

1003
14834
ՀՍԽՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
7/XI. 1922
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԳԱՀԻՐԷ
ՏՊԱՐԱՆ «ՅՈՒՍԱԲԵՐ»
1926

8012

51.337
3 APR 2013

# ՊՕՂՈՍԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԿՍԵՌ ՎԱՐԺԱՐԱՆԻ

Պատուարժան ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ

## ԶԵԿՈՒՑՈՒՄ

Նոյն վարժ.ի 1925—26 ուսումն. տարւայ գործունէութեան մասին

1925—26 ուսումն. տարին անցաւ բնականոն ընթացքով։ Ընտրական պայքարները աննշան ազդեցութիւն ունեցան վարժարանի վրայ։ Մինչեւ Հոկտեմբերի 1-ը վարժարանը բացուած, աշակերտներն արձանագրուած և վերաքննութիւնները կատարուած էին։ Հոկտեմբեր 1ին կանոնաւոր դասաւանդութիւնն սկսաւ։ Բոլոր դասատուները ներկայ էին և շէնքը պատրաստ էր. ձեղունի պատուհանների շինութիւնը, որ վերջացաւ տարւայ սկզբին, չէր կարող խանգարել դպրոցական կեանքի կանոնաւոր ընթացքը։

Անցեալ ուսումն. տարւայ վերջին ծրագրուած էր չորս նոր սենեակներ շինել՝ դպրոցական բակից յատկացուած հողամասի վրայ։ Նիւթական ազատ միջոցների պակասութեան պատճառով այդ ծրագիրը մնաց առանց իրագործութեան։ Պէտք էր թեթեւցնել նախորդ տարիների ընթացքին կատարուած շինութեանց պարտքը։ Քաղաքական ժողովը լաւ համարեց իր երկրորդ որոշումն իրագործել, այսինքն Առաջնորդարանը փոխադրել մանկապարտէզի խարխուլ և անհրապոյր շէնքը՝ իր գրաւած հինգ սենեակները թողնելով մեզ։

Այդ սենեակներից մէկը շատ փոքր լինելով՝ յատկացրինք գիտութեան գործիքների և անօթների պահպանութեան, իսկ մնացած չորսը դարձրինք դասարան։ Այդ չորսից մէկը — Առաջ-

Նորդարանի դահլիճը — բաւականաչափ ընդարձակ էր դասարան դառնալու համար. Միացած երեքը մանր սենեակներ լինելով՝ աշակերտների խճողում առաջ բերին։ Այդ նոր դասարանները, որ մեր շէնքի ճակատն են կազմում և նայում են եկեղեցուն՝ երկրորդ յարկի վրայ են և մի տեսակ անջատուած են միւս դասարաններից։ Դպրոցական զանգի ձայնը, որ հնչում է բակից, չի հասնում այդ սենեակները։ Այս պատճառով նրանց մէջ տեղաւորել տուինք ելեկտրական զանգակներ, որ հնչում էին միանւագ՝ առաջին յարկում տեղաւորուած մի կոճակի սեղմումով։ Անցեալ տարիների նման այս տարի եւս վարժարանի բոլոր սենեակները, միջանցքներն ու սրահը ախտահանել տուինք կրաջրով։ Վարժարանի ամբողջ շէնքը մեր ձեռքն անցնելով՝ դպրոցն առանձնացաւ և ազատուեց Առաջնորդարանի հետ գործ ունեցող մարդկանց ելք ու մուտից։

Մանկապարտէզի նոր շէնք չունեցանք նաեւ այս տարի։ Այս գործի մէջ սակայն որոշ փոփոխութիւն առաջ եկաւ։ Երեք տարուան բերանացի խոստումը այս տարի դարձաւ Պ. Կ. Մելքոնեանի նւիրաբերութեան ակտի յօդուածներից մէկը։ Այդ յօդուածի տրամադրութեան նայելով, պէտք է 5—7000 ոսկի ծախսով մանկապարտէզի մի շէնք կառուցւի Աղեքսանդրիոյ Հայոց եկեղեցու շրջաբակի մէջ։ Այս յօդուածի տրամադրութեան իրագործութիւնը թողնուած է մի մարմնի, որ յայտնի չէ թէ ե՞րբ ժամանակ կ'ունենայ այս խնդրով զբաղւելու։ Մանկապարտէզի շինութեան խնդիրն այսպէսով իրաւապէս շատ աւելի որոշ է քան առաջ, բայց գործնական տեսակէտով թւում է թէ շատ աւելի անորոշ դարձաւ։

Մեզ մնում էր համակերպել եղած կարգադրութեան։ Մանկապարտէզի հին շէնքից Առաջնորդարանը չէր գրաւած երկու սենեակ։ Կարգադրեցինք, որ Մանկապարտէզի երեխաների զբօսանքն ու մարզանքը տեղի ունենան այս սենեակներից մէկում և Առաջնորդարանի բակի մէջ, իսկ միւս սենեակում ճաշեն այն երեխաները, որ մեծ քոյր կամ եղբայր չունեն Նախակրթարանում։ Մանկապարտէզի վեց դասարաններին մենք ստիպուած եղանք Նախակրթարանի առաջին յարկից միայն հինգ սենեակ յատկացնելու. աւելին չունէինք։ Արդէն երրորդ տարին է, տնօրէնը ստիպուած է մնալ առաջին յարկի փոքրիկ և կիսամութ սենեակում, որ ե՛ւ գրադարան է, ե՛ւ միջանցք, ե՛ւ հանդերձարան. իսկ դասատուները ստիպուած են ոտքի վրայ մնալ կամ նստել սրահի մէջ՝ միջանցուկ հովերից պաշտպանուելով։ Նախակրթարանի այդ հինգ սենեակների մէջ էին աւանդւում Մանկապարտէզի դասերը։ Նորեկ երեխաներին, մօտ 82—88 հոգի, ստիպուած եղանք տեղաւորել մի դասարանի մէջ, ուր անցեալ տարի նստած էին 35 հոգի։ Սրանց հսկում և դաս էին տալիս երկու վարժուհի միաժամանակ։ Կարելի է երեւակայել այդ դասարանի խճողումը։



Բաւական թւով ծնողներ, իրենց գլուխը զաւակների յարուցած աղմուկից և նրանց վրայ հսկելու հոգսից ազատելու համար, չորս տարեկան երեխան իբր հինգ տարեկան արձանագրել տալով՝ բերում են Մանկապարտէզ, որ ընդունենք։ Ասէք, որքան կամենաք թէ տեղ չկայ, թէ վտանգաւոր է դասարանները խճողել — լսող չկայ։ Նրանք գալիս են չլսելու որոշումով և խօսում են իբրեւ «ազգ»։ Եւ մենք, «ազգ»ի կրթական վարիչներս, ստիպուած ենք ընդունել երեխաներին, Մանկապարտէզի առաջին երկու կարգը դարձնելով մանուկների ապաստարան։ Իսկապէս ծնողներն իրաւունք ունին. մեծ մասը արհեստաւոր և բանւոր լինելով՝ յաճախ չգիտեն թէ ո՞ւմ խնամքին թողնեն երեխաներին, որ իրանք կարենան գործի գնալ։ Բայց անիրաւ չենք նաեւ մենք, որ աշխատում ենք Մանկապարտէզը չդարձնել ապաստարան։ Երկու իրաւացի կողմերի փոխադարձ չփումով կեանքն այս խնդրին տալիս է թէեւ ոչ բանաւոր, բայց հնարաւոր լուծում, Մանկապարտէզի առաջին կարգերը դարձնելով մանուկների ապաստարան։ Բայց ապաստարանը նոյնպէս պէտք է երեխաների զարգացման համար նպաստաւոր պայմաններ ունենայ։ Ութսուն հոգի հաւաքել մի դասարանի մէջ՝ չի նշանակում նրանց մասին հոգալ պէտք եղած չափով։ Պէտք է այս մասին լրջօրէն մտածել, մանաւանդ, որ Մանկապարտէզի նոր շէնքի մօտալուտ կառուցումն աւելի հարցական դարձաւ քան առաջ։ Ազգային իշխանութեանց գործը նման է պետական գործին. նա ոչ թէ պէտք է իր կարիքները հոգայ իր միջոցների համեմատ, այլ պէտք է միջոցներ գտնի իր կարիքների համեմատ։ Երբ համայնքը տարեկան 80 երեխայ է հասցնում կրթութեան համար՝ Ազգային իշխանութիւնը պէտք է դրա համեմատ պատրաստութիւն տեսնի։ Երեխաներին մերժել չենք կարող, քանի որ ուրիշ հաստատու-

թիւն չկայ, որ հայ երեխային հայ մեծացնի։ Մնում է ընդարձակել մեր գործը հանրային ուժերի աջակցութեամբ. Սրանք խնդիրներ են, որ վերաբերում են Քաղաքական և Թեմական ժողովներին, բայց Հոգաբարձութիւնն իբր կրթական գործին մօտ մարմին՝ պէտք է նախաձեռնէ այս կարգի խնդիրների արծարծումը և հետապնդէ նրանց իրագործումը։ Այս իմաստով մի առաջարկ ես արած եմ անցեալ տարուան զեկուցմանս մէջ (էջ 9—10)։

---

Աշակերտների առողջական վիճակն այս տարի լաւ էր, թէև բացակայութիւն շատ ունեցանք անցեալ տարուան համեմատութեամբ. Մանկապարտէզի առաջին երկու կարգերի 82 աշակերտները բացակայած են 2956 օր, ասել է միջին հաշւով ամէն մէկը 36 օր. հետեւեալ երկու կարգի 87 աշակերտները բացակայած են 2890 օր, ուրեմն միջին հաշւով 33 օր. իսկ երրորդ երկու կարգի աշակերտները բացակայած են 1389 օր, որ միջին հաշւով 19 օր կանի։ Սրա գլխաւոր պատճառը ոչ այնքան հիւանդութիւնն է, որքան ծնողների զգուշութիւնը։ Յունւար ամսին քաղաքի մէջ ճարակում էր ծաղիկ հիւանդութիւնը. Երբ Ծնունդի արձակուրդներից յետոյ վարժարանը վերաբացւեց, Մանկապարտէզի և տարրական առաջին կարգերի շատ երեխաներ դպրոց չեկան. Ծնողները զգուշացան վարակումից և զաւակներին վարժարան չուղարկեցին. Եղան օրեր, որ Մանկապարտէզի մօտ կէսը վարժարան չեկաւ։ Այս պայմաններում որևէ նոր նիւթ աւանդել անկարելի էր, ուստի մի շաբաթով Մանկապարտէզը և տարրական Ա. դասարանները փակեցինք, իսկ վերի կարգերի աշակերտներին հրահանգեցինք, որ վարժարան չգան, եթէ տանը հիւանդ ունեն։ Յունւարի 25—30 ամբողջ աշակերտութիւնը պատւաստեցինք ծաղկի դէմ՝ քաղաքապետութիւնից ձրիաբար ստացած պատւաստով։ Դոք. Մ. Լեւոնեան անձամբ պատւաստեց բոլորին։ Մեր քննութիւնից երեւաց, որ մեր սակաւաթիւ հիւանդ աշակերտները հիւանդութեան բռնւած էին արձակուրդի ընթացքին. վարժարանի մէջ վարակւողներ չեղան։



Նախակրթարանի աշակերտութիւնը բացակայած է 21878 պահ, միջին հաշւով ամէն աշակերտ 56 պահ. անցեալ տարուան միջին թիւը 36,5 էր։ Տարրական 8 դասարանները բացակայած են 13695 պահ, միջին հաշւով 69,5 պահ. իսկ վերի կարգերը՝ 8263 պահ, այսինքն միջին հաշւով 42,5 պահ։ Փոքրերն աւելի բացակայութիւն ունեն քան մեծերը։

Դոք. Մ. Լեւոնեան տարուան ընթացքին վարժարան այցելած է 14 անգամ (առանց հաշւելու պատւաստի հինգ օրերը) և նայած է 17 հիւանդ։ Մի քանի հիւանդ աշակերտ յատուկ տոմսով ուղարկած ենք իր մօտ. Չքաւորների դեղատուումը հոգացած է Աղքատախնամը։ Թէ՛ խաղի արկածների և թէ՛ ուրիշ դէպքերում աշակերտներին առաջին օգնութիւն տւած է Տիկ. Զ. Պօղոսեան։

Աշակերտների մաքրութիւնը նկատելի բարելաւում կրած չէ։ Առաւօտեան մարզանքից յետոյ շարունակւել է նրանց քննութիւնը՝ մաքրութեան տեսակէտով. Ինչ որ կարող է անել յորդորն ու խրատը՝ հսկողներն ու դաստիարակները չեն զլացած կատարել։ Ֆուտբոլի խաղեր և «Կամք»ի մարզավայր գնալը, մանաւանդ գարնան ընթացքին, շարունակւել է անցեալ տարուան նման։

Առողջական տեսակէտով վարժարանը շատ բաւարար կարելի է նկատել, իսկ մաքրութեան տեսակէտով՝ ոչ բաւարար։ Ցամենայն դէպս աղջիկները շատ աւելի մաքուր են քան մանչերը։

---

Աշակերտների ինքնագործութեան նպատակով մի քանի ձեռնարկներ, որ սկսած էինք անցեալ և նախանցեալ տարի, պահեցինք նաև այս տարի։ Աշակերտները շարունակեցին իրենց փոքրիկ խնայողութիւնը, որ հասաւ 1878,5 դահ.ի, այսինքն 90 դահ. աւելի քան անցեալ տարի. Վարժարանից ելնողները յետ ստացան իրենց խնայած գումարները։

Աշակերտական խանութը, որ հիմնած էինք անցեալ տարւայ Յունւարի վերջին, շարունակեց աշխատել նաև այս տարի և ունեցաւ 1109 դահ. զուտ շահ։ Անցեալ տարի և այս տարւայ

սկզբին մենք խանութը յանձնեցինք չքաւոր աշակերտների, տալով նրանց շահի քառորդը։ Այս տարուայ կէսին երեք աշակերտ յանձն առան վարել խանութի գործերը՝ իրենց հասանելիք շահաբաժինը յատկացնելով աշակերտական արհեստանոցի պէտքերին։ Այս վարմունքը կարող է գաղափար տալ այն ոգու մասին, որ վարժարանը ներշնչում է իր լաւագոյն սաներին։ Անցեալ տարուան համեմատութեամբ խանութն այս տարի փոքր ինչ լայն գործառնութիւն ունեցաւ։ Անցեալ տարի միջին հաշւով ամսական զուտ շահ եղած էր 113 դահ., այս տարի 123 դահ. եղաւ։ Զուտ շահից 19 դահ. յատկացւած է Դամասկոսից Զահլէ ապաստանած աշակերտների օգտին։ 97,5 դահ. վճարւած է չքաւոր աշակերտների համար իբր տոմսի գին՝ ներկայ լինելու մի աճպարարի ձեռնածութեանց ցուցադրութեան։ Մնացորդ 993,5 դահ. անցեալ տարուան 322 դահ. զուտ շահի հետ միասին — ընդամենը 1315,5 դահ. — իբր աւանդ յանձնւած է ազգային սնտուկին։

Աշակերտներն այս տարի մի նոր շահաբեր ձեռնարկ ունեցան։ Գետնայարկի սենեակներից մէկի մէջ, որ յատկացւած էր ձեռական աշխատանքի, նրանք հաստատեցին աշակերտական սինեմա։ Արհեստանոցի սեղաններից մէկի վրայ հին գրատախտակներով շինեցին մթին սենեակը. դիմացի պատին բաւական մեծութեամբ մի քառանկիւնի ներկեցին կրով, եզերեցին սեւ շրջանակով, վարձու առան աշակերտներին մատչելի և պատշաճ ֆիլմեր և տոմսը կէս գահեկանի մի քանի ներկայացում տւին։ Տեղը չափազանց նեղ էր, յաճախորդը շատ, գարունն սկսած էր և օդը ծանր էր գետնայարկի մէջ, ուստի կարգադրեցինք վերջ տալ ներկայացումներին։ Այս ձեռնարկի վրայ ծախսւած է մօտ 360 դահ., շահ եղաւ 186 դահ., որ նշանակւած է վարժարանի բացառիկ հասոյթների կարգին։ Յուսով ենք առաջիկայ տարին այս ծախսը լրւին գոցւի և մի փոքր շահ ունենանք։ Այսպիսով վարժարանն ունեցաւ մի փոքրիկ սինեմայի գործիք։ Այս ամբողջ ձեռնարկին, ներկայացումներին և հաշիւներին հսկում էր Պ. Զ. Պալեան։

Աշակերտներն այս տարի եւս կազմակերպեցին իրենց վիճակահանութիւնը, որի տոմսն արժէր 1 դահ. վիճակահանութեան դրւած էին գեղեցիկ նկարներ, ջրաներկի օրինակներ, ձեռարւեստ-



տի խաւաքարտեր և մի քանի խաղալիք։ Վեց տոմսից մէկը շահող էր։ Տոմսերն սպառւեցին 4—5 օրւան մէջ։ Հասոյթն եղաւ 1500 դահ., որ նշանակւած է բացառիկ մուտքերի հաշւին։ Մեր բերել տւած գեղարւեստական պատկերների և գրքոյկների կէսը միայն վիճակահանութեան դրինք. մնացած կէսը իբր մրցանակ ամավերջի հանդէսին բաժանեցինք յաջողագոյն աշակերտներին։ Վարժարանն այսպիսով որոշ խնայողութիւն ունեցաւ։

Անցեալ տարուայ նման աշակերտներն այս տարի եւս մասնակից եղան հանրօգուտ հանգանակութեանց։ «Որբերու Կիրակին» Մանկապարտէզի մէջ բերած է 101,3 դահ., իսկ Նախակրթարանի մէջ 203,3 դահ. ընդամենը՝ 304,6 դահ., որ յանձնւած է Բարեգործականի տեղւոյ Մասնաճիւղին։ Անցեալ տարի այս գումարը 670 դահ. էր։ Որբախնամի թիւ 39 գանձանակը, որ կախւած էր Մանկապարտէզի մէջ, բերած է 304,8 դահ., որ յանձնւած է պատկան մարմնին։ Անցեալ տարի այս գումարը 359,5 դահ. էր։

Դամասկոսից Զահլէ ապաստանած աշակերտների կոչին արձագանգ տալով՝ վերին կարգի աշակերտներն իրենց շրջանում հանգանակեցին 181 դահ.։ Աշակերտական խանութը լրացրեց այդ գումարը, հասցնելով 200 դահ.ի, որ փոխադրւեց Զահլէ՝ գրենական պիտոյքների համար։ Վարժարանն իր կողմից 196 կտոր հայերէն և ֆրանսերէն հին դասագրքեր ուղարկեց։ Դրամն ու գրքերը ժամանակին տեղ են հասած։

Որբախնամի օգտին այս տարի ոչինչ հանգանակել չկարողացանք. պարզապէս ժամանակ չունեցանք։ Դեկտեմբերին «Որբերի Կիրակին» էր, յունւարին մեր ձեռագործների վիճակահանութիւնը. փետրւարին կիսամեայ քննութիւններ էին, մարտին ընտրական պայքարներ, երբ մարդիկ մոռացած էին հանրային տառապանքը, ապրիլին նոյն տրամադրութիւնն էր իշխում, իսկ մայիսն ու յունիսը տարւան վերջին ամիսներն էին և աշակերտներն իրենց գործով էին զբաղած. Անցեալ տարի այդ նպատակով 5840 դահ. հանգանակեցինք։ Հանգանակութեանց հասոյթն անցեալ տարուան համեմատութեամբ շատ է նւազած։

Ինքնագործութեան լաւագոյն դպրոցը աշակերտական ինքնավարութիւնն է, որի մի փորձն արինք այս տարի Բարձր. Ա. դասարանի մէջ Պ. Զ. Պալեանի ղեկավարութեամբ։ Աշակերտ-

ներն իրանք ընտրեցին իրենց օրապահները, դասարանի նախագահը, գոյքերին հսկողը. իրանք կատարեցին գրօսանքին շարքով իջնելու և բարձրանալու հսկողութիւնը։ Դաստիարակի մասնակցութեամբ ժողովներ ունեցան ներքին թիւրիմացութիւնները պարզելու և դասարանական ձեռնարկներ անելու համար։ Մշակեցին մի տեսակ դասարանական ինքնասիրութիւն. Վիճակահանութեան տոմսերի երրորդ մասը այդ դասարանն սպառեց։ Ամէն վարժարանի մէջ այդ դասարանն ամենից աւելի անկարգ է լինում. Ինքնավարութիւնը կարծում ենք նպաստեց սրանց կարգապահութեան. Առաջիկային գուցէ կարողանանք ինքնավարութիւն ստեղծել մի քանի ուրիշ դասարանների մէջ։

Ինքնագործութեան մի նոր ասպարէզ ստեղծուեց աշակերտական թէյասեղաններով, որ նախաձեռնեց Բարձր Ա. դասարանը Պ. Զ. Պալեանի գլխաւորութեամբ. Նրան հետեւեց Բարձր. Բ. դասարանը Պ. Բ. Թաշեանի ղեկավարութեամբ, որին յաջորդեց Բարձր. Ա. դասարանը Պ. Գ. Թագւորեանի առաջնորդութեամբ։ Առաջին երկու թէյասեղաններին հրաւիրուած էր ուսուցչական կազմը. երրորդը աշակերտական ցերեկոյթ էր, ուր հրաւիրուած էին նաեւ ծնողներ։ Այս թէյասեղանները և հանդէսը մտերմական մի մթնոլորտ ստեղծեցին։ Աշակերտ, դասատու և ծնող հանդիպեցին իրար անպաշտօն կերպով. Աշակերտները ցուցադրեցին իրենց շնորհքը արտասանութեան, երգի, նուագի և դերասանութեան մէջ. կազմակերպեցին և կառավարեցին հիւրասիրութիւնը։ Դասատուներից ոմանք մասնակից եղան իրենց շնորհքի ցուցադրութեամբ. մի քանիսը խօսք առան՝ միասնական աշխատանքը գովելով։ Ցաւալի է, որ այս կարգի անպաշտօն հանդիպումները ծնողների և աշակերտների հետ, որ վարժարանի կեանքին կարող են տալ ընտանեկան և մտերմական կերպարանք, հնար չունեցանք յաճախակի սարքելու։ Բայց գործն սկսուած է և բարերար ազդեցութիւնը տեսնուած է. Գուցէ առաջիկային կարողանանք այս գեղեցիկ ձեռնարկը դպրոցական աւանդութիւն դարձնել։

Աշակերտների օժանդակութիւնը դպրոցավարութեան գործին, որի մասին խօսած եմ անցեալ տարուան տեղեկագրիս մէջ (տես էջ 15), շարունակեց նաեւ այս տարի. Արհեստանոցում աշխատող աշակերտները տարւայ ընթացքին ներկեցին վարժարանի



գրասեղաններից 40 հատ. նաեւ 1 պահարան, 1 ամբիոն և 1 գրատախտակ։ Պ. Ա. Ոսկերակցեանին խնդրեցինք վարժարանի գրքերը կազմել աշակերտների ներկայութեամբ, որ մի քանիսը գիրք կազմել սովորեն. Շինել տուինք և գնեցինք պէտք եղած գործիքներից մի քանիսը. Սիրով յանձն առաւ և աշակերտները մասամբ դիտելով, մասամբ աշխատելով՝ փոքր ինչ սովորեցին գիրք կազմել. Այնուհետեւ մենակ մնալով՝ փորձեր արին հին գրքերի վրայ և քիչ վարժուելով՝ համարձակեցան նոր գրքեր կազմել։ Մինչեւ տարւայ վերջը կազմեցին աշակերտական գրադարանից 53 գիրք։ Մի քանիսը ցուցադրուած էին ամավերջի հանդէսին։ Ամրան ընթացքին շարունակելու են այս գործը։ Նրանց աշխատանքի շնորհիւ մենք զգալի խնայողութիւն ունեցանք մեր ծախսերի մէջ.

Արհեստանոցի աշխատանքները շարունակուեցին նախանցեալ տարուան կարգով. Պ. Պետրոս Տէր Գասպարեան այս տարի հնար չունեցաւ իր աջակցութիւնը բերելու այս գործին, իսկ մենք նիւթական միջոց չունեցանք պէտք եղած ծաւալը տալու նրան։ Աշխատելու ցանկութիւն ունեցող աշակերտներին մենք տրամադրեցինք ներքնայարկից մի սենեակ և մի մթին նկուղ ելեքտրական լուսով, ուր նրանք կարողացան օգտակար ելք տալ իրենց կուտակուած եռանդին։ Աշակերտներն այս տարի առաւելապէս գիտական մօդէլներ շինելու վրայ աշխատեցին և արտադրեցին բաւական թւով գործեր, որ ցուցադրուած էին ամավերջի հանդէսին։ Սրանք գիտութեան դասերի ընթացքին իւրացրած սկզբունքների գործադրութիւն եղան՝ շատ համեստ ատաղձով և ձեռքի աշխատանքով։ Միաժամանակ սրանք լաւագոյն միջոցն եղան գիտական սկզբունքները իւրացնելու։ Մասերի յարմարացումը և ամբողջի յօրինուածքը մտքի տոկուն աշխատանք և բարոյական կորով են ցուցադրում։ Պէտք էր ուշադիր և յամառ աշխատանք, հնարաւորութիւն, կշռադատութիւն և, որ գլխաւորն է, սէր դէպի գիտութիւնն ու դասատուն այդ գործերը արտադրելու համար։ Ցուցադրուած էին լծակներ, շինութեանց հիմքի հորերը ամրացնող մեքենայ, ջաղացք, ցորեն զտելու գործիք, շոգեմեքենայ ևլն., որոնք գործում էին պէտք եղած ժամանակ։ Այս գործերը վկայում են գործնական այն ոգու մասին, որ իշխում է վարժարանի մէջ գիտութեան դասերին։

Աշակերտների եռանդին ելք տալու նպատակով մենք վարժարանի ետեւն ընկած հողամասը յատկացրինք բոյսերի մշակութեան: Այս գործին հսկում էր Պ. Մ. Փափազեան: Մի չար ձեռք կիրակի օրերը, երբ վարժարանը փակ է, աւերում էր աշակերտների մշակած մարգերը. բայց մերոնք յամառում էին հայոց ազգի պէս: Կարելի է ասել թէ չորս—հինգ անգամ աշակերտները ցանեցին և չարագործներն աւերեցին: Այս աշխատանքը չէր օգտագործւում բնագիտութեան դասերի համար, այլ օգտակար ժամանց էր միայն: Նա աշակերտներին չփման մէջ էր պահում հողի և բոյսի հետ:

---

Աշակերտների ընդհանուր թիւն այս տարւայ սկզբին եղած է 720, այսինքն 5 հոգի պակաս քան անցեալ տարի նոյն ժամանակ (Տես տախտակ No. 1): Մանկապարտէզում եղած են 252 հոգի, որոնցից մանչ 130, աղջիկ 122. իսկ Նախակրթարանում եղած են 468 հոգի, որոնցից 242 մանչ և 226 աղջիկ: Տարւան վերջը աշակերտների թիւն իջած է 682-ի, այսինքն 30 աշակերտ պակաս քան անցեալ տարի նոյն ժամանակ: Տարւայ վերջը Մանկապարտէզում եղած են 241 հոգի, որոնցից մանչ 124 և աղջիկ 117, իսկ Նախակրթարանում՝ 441 հոգի, որոնցից 230 մանչ և 211 աղջիկ: Ուրեմն 11 հոգի պակասած են Մանկապարտէզից և 27 հոգի Նախակրթարանից, ընդամենը 38 հոգի: Մանկապարտէզից պակասած է աշակերտների 4,4 առ հարիւրը, իսկ Նախակրթարանից՝ 5,7 առ հարիւրը:

Ամբողջ դպրոցում տարւան սկզբին մանչերը 372 հոգի էին, այսինքն 51,7 առ հարիւր, իսկ աղջիկները 348 հոգի, այսինքն 48.3 առ հարիւր: Տարւայ վերջին մանչերը կազմում են 51,9 առ հարիւր, իսկ աղջիկները 48,1 առ հարիւր: Եթէ առնենք մի միայն Նախակրթարանը, տարւայ վերջին մանչ և աղջիկ հաւասար էին՝ լինելով 220 և 221: Անցեալ տարի մանչերը փոքր ինչ աւելի էին վարժարանի մէջ՝ կազմելով տարւայ սկզբին 52,8 և վերջին 53,5 առ հարիւր.



Տարւան ընթացքին Նախակրթարան մտած են 32 հոգի, որոնցից 15 մանչ, 17 աղջիկ և ելած են 70 հոգի, 11-ը Մանկապարտէզից և 59-ը Նախակրթարանից: Այս երկու թւերի տարբերութիւնն է (70—32=38), որ կազմում է մեր բացարձակ պակասորդը: Անցեալ տարի վարժարանից ելած էին 63 հոգի. այս տարի ելնողները 7-ով աւելի են: Այս աւելցութիւնը սակայն դիպւածական է: Այս տարւան ելնողներից 9 հոգի մեկնած են Կիպրոս՝ Մելքոնեան որբանոցը, իսկ 7 հոգի տարւայ վերջին երկու ամիսներին վարժարան չեն եկած՝ յետնեալ թոշակները վճարել չկամենալով: Նկատենք նաև, որ այս տարի քաղաքից մեկնած են 22, մինչդեռ անցեալ տարի 6 հոգի էին: Հաշւի առնելով ելնողների այս դիպւածական յաւելումը, կարելի է ասել թէ վարժարանն ապրում է բնականոն վիճակ: Հետաքրքրական է նաև, որ այս տարի միջին կարգերը մտած են 18, իսկ տարրականները՝ 14 հոգի. անցեալ տարի այդ թւերը 15 և 16 էին: Անցեալ տարի վերջին կարգերից ելած են 2, իսկ այս տարի 7 հոգի: Պատճառն այն է, որ ծնողներից ոմանք 9 տարւան ազգային կրթութիւնը շատ են համարում և զաւակներին հանելով՝ մի երկու տարի ուղարկում են օտար վարժարան, որ «քիչ մըն ալ ֆրանսերէն սորվին» կամ նրանց օժանդակութեան կարիքն ունենալով՝ դնում են գործի:

Տարւայ ընթացքին Նախակրթարանից ելած 59 հոգուց 22-ը մեկնած են քաղաքից, 8-ը հիւանդութեան պատճառով դադրած են դպրոց յաճախել, 21 հոգի մտած են գործի և 8 հոգի օտար վարժարան: Անցեալ տարւան համեմատութեամբ այս տարի մեկնողները 16 հոգով աւելի են — գործի մտածներն աւելի են 9 հոգով: Եթէ անցեալ տարւան անյայտ պատճառով չեկածներին համարենք հիւանդութեան պատճառով չեկած՝ ապա այս տարի նոյն պատճառով ելածները 11-ով պակաս են, իսկ օտար վարժարան մտնողները աւելի են 1-ով: Այսպիսով 26 հոգի (16 մեկնած, 9 գործի մտած, 1 օտար վարժարան) դիպւածաբար աւելի են դուրս եկած այս տարի, քան անցեալ տարի և 11 հոգի (հիւանդներ)՝ պակաս են ելած. որով տարւայ ընթացքին Նախակրթարանից բացարձակապէս պակասած են 15 հոգի: Եթէ այս թիւը, որ արտաքին պատճառների արդիւնք է, հանենք այս տարւան ելնողների թւից կամ գումարենք անցեալ տարւան ել-

նողների թիւն՝ համեմատութեան հաւասար պայմաններ ստեղծելու համար (44+15 կամ 59—15), այն ժամանակ լիովին պարզ կը լինի մեր վարժարանի կայուն վիճակը՝ աշակերտների ել ու մուտի տեսակէտից։ Լիովին կը պարզւի նաեւ, որ ընտրական պայքարը և հանրային ինչ-ինչ խմբակների հակառակութիւնն ու չարախօսութիւնը վարժարանի դէմ մազաչափ ազդեցութիւն չեն արած մեր աշակերտների թւի վրայ։ Երկրից հեռանալը և զաւակներին գործի համար վարժարանից հանելը զուտ տնտեսական պատճառներ են, վերաբերում են Եգիպտոսի մէջ ծայր տուած տագնապին և ոչ մէկ կապ ունին հանրային տրամադրութեան հետ՝ վարժարանի նկատմամբ։

Վարժարանի կայուն դրութեան և մինչեւ իսկ փոքր ինչ բարւոքման նշմարներ կարող ենք նկատել՝ քննութեան առնելով մի շարք այլ թւեր։ Անցեալ տարւան տեղեկագրի մէջ (էջ 47) ենթադրում էինք թէ այս տարւան սկզբին Նախակրթարանի մէջ պէտք է ունենանք 529 աշակերտ, բայց միաժամանակ յարում էի թէ «հաւանական է, որ այս թւից շատ աւելի պակաս աշակերտութիւն ունենանք, եթէ տարւան սկզբին նկատելի թւով աշակերտներ գործի մտնեն կամ անցնեն օտար վարժարան»։ Եւ իսկապէս այս տարւայ սկզբին եկած էին 468 հոգի, այսինքն 61 հոգի պակաս։ Քննելով մեր աշակերտական ցուցակները՝ երեւաց, որ մերոնցից իսկապէս չեն եկած 65 հոգի. և եթէ սպասելի քանակից միայն 61 հոգի են պակսած փոխանակ 65 հոգու, պատճառն այն է որ 4 հոգի եկած են ուրիշ վարժարաններից։

Այս տարւայ սկզբին չեկած 65 հոգուց 12-ը մտած են ուրիշ հայ վարժարաններ,— 10-ը Հայկազեան և 2-ը Պերպերեան. 24 հոգի մտած են օտար վարժարան, 22 հոգի անցած են գործի, 4 հոգի մեկնած են քաղաքից, 1 հոգի տանն է մնացած և 2 հոգի մեռած են։ Մինչդեռ անցեալ տարւայ սկզբին վարժարան չէին եկած 102 հոգի, որ նշանակում է թէ անցեալ տարւան համեմատութեամբ 37 հոգի (102—65) գերադասած են մնալ մեր վարժարանի մէջ։ Անցեալ տարւան 102 հոգուց 63-ը՝ այսինքն 61,5 առ հարիւրը մտած էին օտար վարժարան, իսկ այս տարւան 65 չեկածներից 36 հոգին են մտած ուրիշ վարժարան, այսինքն 56 առ հարիւրը։ Օտար վարժարան մտնողների այդ



տարբերութիւնն է (5,5 առ հարիւր) որ մենք փոքրիկ բարւոքում համարեցինք վերը։ Նշանակում է այս տարի մի քիչ աւելի գերադասած են ազգային վարժարանի մէջ մնալ, քան անցեալ տարի։ Որքան մեր վարժարանը լաւանայ ներքուստ և լեզուների դասաւանդութիւնը զօրանայ, այնքան պէտք է պակսի օտար վարժարան մտնողների թիւը, ինչ որ չափազանց կարեւոր է ազգային նկարագրի պահպանութեան տեսակէտից։

Քննելով այս թւերը մի ուրիշ կողմից՝ կը տեսնենք, որ վերին 8 կարգերի աշակերտները անցեալ տարի 206 էին, իսկ այս տարի 235 են. Նշանակում է ծնողները գերադասում են իրենց զաւակներին երկար թողնել մեր վարժարանում*]։ Եթէ այս թիւը բաժնենք իր բաղադրիչ մասերի՝ կը տեսնենք, որ միջին կարգերում անցեալ տարի 253 հոգի էին, այս տարի 166. բարձր կարգերում անցեալ տարի 53 հոգի էին, այս տարի 69։ Եզրակացութիւնը նոյնն է։ Անհրաժեշտ է, որ համայնքն իր զաւակների ազգային վարժարանի մէջ պահէ գոնէ 9 տարի (առանց Մանկապարտէզի)։ Սա չի լինի լիակատար երկրորդական կրթութիւն, բայց բաւական կը լինի ազգայնօրէն հայ ժողովուրդ պատրաստելու համար։

Եթէ յաջողէինք մեր և Գահիրէի ջանքերով Եգիպտոսի մէջ հաստատել մի երկրորդական վարժարան երեք կամ չորս տարւան դասընթացքով, ուր մեր համայնքների հաշւին ուսանէին Պօղոսեան և Գալաթեան վարժարանն աւարտած մանչեր և աղջիկներ, այն ժամանակ ազգային մշակոյթի մի նոր հնոց ստեղծած կը լինէինք այս երկրի մէջ՝ բովանդակ գաղութահայութեան համար։ Այնտեղ կը հաւաքէինք մեր մտաւորական առաջնակարգ ուժերն իբր դասատու, որ մի կողմից կը մշակէին հայկական ուսումները, միւս կողմից կ՚աւանդէին նորահաս սերունդին։ Օտար լեզուները, գիտութիւնը և ուսողական առարկաները կարելի էր աւանդել օտար լեզւով և օտար դասատուների միջոցով։ Այդ վարժարանը հայկական կը լինէր իր ոգով և շատ բարձր այս երկրի մէջ եղած երկրորդական վարժարաններից իր բնոյթով՝ իբր աշխարհիկ հաստատութիւն։ Մի՞թէ երկրորդական

*] Վերին կարգեր ասելով՝ հասկանում ենք միջին և բարձր կարգերը, այսինքն 4—5 և 6—8 տարւան ուսումը։

վարժարան հաստատելն ու վարելը կղերականների և կղերամիտների բաժինն է միայն և մի՞թէ ազգային մշակոյթի և ազգային նկարագրի պահպանութեան բարձր մտահոգութիւնները բաւական չեն խթանելու մեր թմրած նախաձեռնութիւնը և ազգային պատուասիրութիւնը։ Մեզ նման ցրիւ ու բաժան ժողովուրդի ազգայնութիւնը մասամբ ապահովել կարելի է երկրորդական ազգային կրթութեամբ։

---

Քննութիւններն այս տարի երկու անգամ տեղի ունեցան. փետրուարի 8—16ին և յունիս ամսուան ընթացքին։ Տարրական կարգերը քննուեցան հայոց լեզուից և ուսողութիւնից, իսկ մնացած կարգերը բոլոր առարկաներից։ Միջին Բ. դասարանից սկըսած՝ քննութիւնները գրաւոր եղան։ Ամեն դասարանի լաւագոյն և վատթարագոյն աշխատանքները զատուած և պահուած են համեմատութեան համար։ Բոլոր քննութիւնները ստուգման բնոյթ ունէին։ Առաջին կիսամեակին վերին կարգերը ազատ ժամանակ ունեցան պատրաստուելու. երկրորդ կիսամեակին ստուգումները կատարեցինք դասերի ընթացքին։ Այս կարգադրութիւնը շատ նպաստեց վարժարանի կարգապահութեան։ Անցեալ տարի բարձր կարգերը 2—3 ազատ օր ունեցան ամեն առարկայի համար, Այս տարի յունիսի սկզբին կարգադրեցինք նոր նիւթ չաւանդել վերին կարգերում և շաբաթը երկու առարկայից ստուգում կատարել նոյն առարկաների սովորական պահերին։ Այսպիսով աշակերտները ազատ ժամանակ ունեցան տանը պատրաստուելու այն առարկաներից, որոնց ստուգումը պէտք է լինէր շաբաթուան ընթացքին. մնացած առարկաներից պատրաստելու դասեր չունէին։ Տարուան վերջին ինքս անձամբ բառագիտական մտափորձի ենթարկեցի տարրական կարգի շատ աշակերտների՝ չափելու համար նրանց մտաւորական զարգացումը։ Արդիւնքը բաւարար էր։

Այս տարի Մանկապարտէզն աւարտած են 56 հոգի. սրանցից 25 աղջիկ և 31 մանչ։ Անցեալ տարի աւարտողները 24 հոգի էին։ Նախակրթարանից աւարտող չունենք, որովհետև առաջի-



կայ տարին բանալու ենք 9-րդ դասարան։

Նախակրթարանի մէջ դասարան փոխած են աշակերտութեան 87,6 առ հարիւրը (տես տախտակ No. 2). անցեալ տարի 85,1 էին։ Կարգը փոխողներից 183 հոգին մանչ են, 202ը աղջիկ։ Նախակրթարանի մէջ հաւասար թուով մանչ և աղջիկ կան —220, 221 — հետեւապէս մանչերի 83,2 առ հարիւրն է կարգը փոխած, իսկ աղջիկների 92,2 առ հարիւրը, որ նշանակում է թէ աղջիկներն աւելի ջանասէր են քան մանչերը։ Անցեալ տարի այս տարբերութիւնն աւելի փոքր էր. աղջիկները 86 առ հարիւր էին, իսկ մանչերն 84, հետեւապէս երկու տոկոս էր տարբերութիւնը. մինչդեռ այս տարի տարբերութիւնը հասնում է 9 տոկոսի։ Այս երեւոյթի գլխաւոր պատճառը կարծում ենք այն է, որ մանչերն աւելի են ազդւում շուկայի տեսակէտներից և շատ կարեւորութիւն չեն տալիս ազգային կրթութեան. յետոյ աղջիկները տնակեաց են, իսկ մանչերը դրսերը շատ են մնում թէ՛ տան ու շուկայի գործով և թէ՛ խաղի ու զուարճութեան համար. մարզավայր, սինեմա և այլն։ Կարծում եմ նաեւ, որ այս յետամնացութեան վրայ որոշ չափով ազդած են և ընտրական պայքարները։

Մնացողների տոկոսն այս տարի 11,3 է. անցեալ տարի 8,4 էր։ Վերաքննելիների տոկոսն այս տարի 1,1 է, անցեալ տարի 6,5 էր։ Սրա պատճառն այն է, որ մենք նկատեցինք թէ վերաքննութիւն նշանակելն ապարդիւն է մնում։ Աշակերտների մեծ մասը չքաւոր լինելով՝ ամառը մտնում են գործի՝ դրամ շահելու կամ արհեստ սովորելու համար, ուստի ժամանակ չունեն գրքի երես նայելու։ Կարելի էր վերաքննելի նշանակել նրան, ով հնար ունէր պատրաստուելու. մնացածներին պէտք էր փոխել կամ թողնել նոյն դասարանում։ Այսպիսով կարգ փոխողների և մնացողների թիւը պէտք է մեծանար, իսկ վերաքննելիների թիւը նուազէր, ինչ որ հաստատւում են վերը բերած տոկոսները։

Անցեալ տարուայ նման այս տարի եւս ամավերջի ցուցահանդէսին վարժարանի յառաջդիմութիւնը պատկերացուած էր բազմաթիւ թւապատկերներով և գծապատկերներով։ Նախ՝ 16 զատ-զատ տախտակների վրայ ներկայացուած էր վարժարանի 16 դասարանների յառաջդիմութիւնը երկամսեակներին և կիսամեայ քննութիւններին ամեն մի առարկայից շահած նիշերի գումար-



14854
Ս.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ներով։ Այս տախտակների տակ կարմիր մելանով նշանակւած էր թէ ընդհանրապէս ո՞րքան նիշ է շահած դասարանը երկամսեակներին և յետոյ թէ աշակերտները առարկաներն ի՞նչ նախասիրութեամբ են ուսած. վերջին թւացանկի հիմքը կազմում էին աւանդւած առարկաներից շահած նիշերի տարեկան գումարները։

Այնուհետեւ 8 գծապատկերով ներկայացւած էր համանուն զուգընթաց դասարանների համեմատական յառաջդիմութիւնը, որ միաժամանակ և առարկաների նախասիրութեան պատկերացումն էր բեկուն գծերով։ Այս գծապատկերների հիմքը կազմում էին առարկաներից շահած նիշերի տարեկան գումարները։

Տասնեւմէկ գծապատկեր ցուցադրում էին 11 առարկաների ուսման բաղդատութիւնը այն դասարաններում, ուր նրանք աւանդւում էին և մի յատուկ տախտակ պատկերացնում էր հայերէնի և ուսողութեան բաղդատութիւնը բոլոր դասարաններում։ Մի ուրիշ տախտակ ներկայացնում էր վերին 8 կարգերի յառաջդիմութիւնը՝ երկամսեակների ընթացքին ամեն մի աշակերտի շահած նիշերի գումարի հիման վրայ։ Երեք յատուկ տախտակ պատկերացնում էին մասնակի տախտակների ամփոփումները. 1) աշակերտների ջանասիրութիւնը երկամսեակների ընթացքին, 2) առարկաների նախասիրութեան կարգը, 3) վերին 8 դասարանների յառաջդիմութիւնը աշակերտների շահած նիշերի գումարների հիման վրայ։

Այս բոլոր տախտակների տպագրութիւնը մեծ ծախս կը պահանջէ, ուստի տեղեկագրիս կցում եմ տախտակների ամփոփումները միայն, որ բաւական են վերլուծութեան և եզրակացութեանց յանգելու համար։

Եթէ համեմատենք անցեալ տարւան թիւ 17 տախտակը այս տարւան թիւ 3 տախտակի հետ, մենք շատ հետաքրքրական եզրակացութեանց կը գանք։ Այս տախտակները կազմւած են դասարանների երկամսեայ նիշերի գումարի հիման վրայ։ Կիսամեայ քննութեանց արդիւնքը նկատւած է իբր մի երկամսեակի արդիւնք։ Այսպիսով մենք ունենք 7 թիւ. հոկտեմբեր-նոյեմբերին, դեկտեմբերին, յունւար-փետրւարին, մարտին, ապրիլ-մայիսին, Ա. կիսամեայ քննութեան և երկրորդ կիսամեայ քննութեան շահած նիշերի գումարները։ Տարրական կարգերի մէջ կիսամեայ քննութիւնները հաշւի չեն առնւած, որով-



հետեւ եղած են ոչ թէ բոլոր առարկաներից, այլ հայոց լեզւից և ուսողութիւնից։ Շահած նիշերի գումարները մեր չտպագրած տախտակների վրայ դասաւորւած են իրար տակ մեծութեան կարգով և դիմացները գրւած են 1, 2, 3 ևլն., այնպէս որ մեր տպագրած թիւ 3 տախտակի վրայ տարրական Ա.[I] դասարանի օրինակում տեսնելով 5, պէտք է համարել, որ այդ դասարանը հոկտեմբեր-նոյեմբերին ամենից քիչ նիշն է շահած, հետեւեալ թիւը՝ 4 ցոյց է տալիս թէ դեկտեմբերին աւելի շատ նիշ է շահած և այլն։ Որքան թիւը փոքր է տախտակի վրայ, այնքան շահած նիշերի գումարը մեծ է իրականութեան մէջ։

Արդ՝ համեմատելով անցեալ և այս տարւան տախտակները՝ մենք տեսնում ենք, որ տարրական Ա. երկու դասարանները, տարրական Բ.[I] դասարանը և տարրական Գ.[III] դասարանը անսայթաք յառաջդիմութեան մէջ են։ Նրանց թւերը յաջորդաբար փոքրանում են լինելով 5, 4, 3, 2, 1, որ նշանակում է թէ երկամսեակների ընթացքին շահած նիշերի գումարը յաջորդաբար բարձրանում է։ Միւս դասարանները ելեւէջ ունեն։ Անցեալ տարի բոլոր դասարանները ելեւէջ ունէին, այս տարի 16 դասարանից չորսը կանոնաւոր և անսայթաք յառաջդիմութեան մէջ են։ Սա նշան է, որ վարժարանի մէջ հաստատւում է մի կարգաւոր աշխատանք թէ՛ դասատուների և թէ՛ աշակերտների շրջանում։ Դասատուներն աշխատում են առաջ տանել աշակերտներին, իսկ նրանք ջանք են անում անընդհատ առաջ անցնելու։ Տրամադրութեանց խաղ չկայ գործի մէջ, այլ լուրջ ու լարւած աշխատանք։ Միւս դասարանները թէեւ այս կանոնաւոր ընթացքը չունեն, բայց ընդհանուր առմամբ յաջորդաբար մեծ արդիւնք են տալիս։ Բոլոր դասարանների մէջ նւազագոյն թւերը՝ 3, 2, 1 նշանակւած են վերջին ամիսների համար։ Նոյն պատկերն է նաեւ կիսամեայ քննութեանց համար. Ա. կիսամեակի շահած թւերն ըստ մեծութեան տատանւում են 7—2ի միջեւ, իսկ Բ. կիսամեակի թւերը 2—1ի միջեւ, որ նշանակում է թէ նիշերի մեծագոյն գումարները շահւած են տարւան վերջին։ Այս բոլոր թւերը որոշապէս ցուցադրում են այս տարւան յառաջդիմութիւնը թէ՛ ընթացքի կանոնաւորութեան և թէ՛ շահած արդիւնքի տեսակէտով։

Եթէ տարրական 8 կարգերը զատենք վերին 8 կարգերից և

Նրանց շահած թւերը զատ-զատ գումարենք՝ մենք կը ստանանք հետաքրքրական մի աղիւսակ.

| | տարրական կարգեր | վերին կարգեր |
|---|---|---|
| Հոկտ..նոյեմ. | 38 | 50 |
| Դեկտեմբեր | 24 | 41 |
| Յուն..փետր. | 21 | 32 |
| Մարտ | 19 | 39 |
| Ապրիլ-մայիս | 10 | 17 |

Այս թւերը պարզ ցոյց են տալիս ամբողջ վարժարանի բնական յառաջդիմութիւնն ընդհանուր առմամբ. Շահած նիշերը գնալով բարձրանում են (փոքր թիւը նիշերի մեծ գումար է ցոյց տալիս)։ Մի քայլ դէպի յետ նկատւում է վերին կարգերի մէջ. Եթէ վերին կարգերի յաջորդական թւերը համեմատենք իրար հետ, կը տեսնենք, որ նրանք գնալով պակասում են 9-ով. 50, 41, 32. մարտ ամսին սպասելի էր 23, դրա փոխարէն ունենք 39, այսինքն մի քայլ յետ։ Ընտրական պայքարների արդիւնք է այս առժամեայ յետադիմութիւնը. տարրական կարգերը, որ խելահաս չեն, գլուխները կախ հետեւած են իրենց ուսման և անսայթաք առաջդիմած են՝ փետրուարին տալով 21, մարտին 19. իսկ միջին և բարձր կարգերը, որ աւելի խելահաս են և ենթակայ շրջապատի ազդեցութեան՝ խախտուած են իրենց ջանասիրութեան մէջ. Ընտրական պայքարի դադարից և կրքերի անկումից յետոյ՝ նրանք եւս անցած են իրենց անմիջական աշխատանքին և միանգամից հասած են այնտեղ, ուր պիտի լինէին, եթէ ընտրական պայքարը չը խանգարէր. Նրանք 39ից իջած են մինչեւ 17։ Այսպիսով ընտրական պայքարի չարախօսութեանց ազդեցութիւնը մասնակի և անցողական է եղած և աշակերտները շուտով մտած են բնական ընթացքի մէջ։

Կրթական աշխատանքի կանոնաւոր ընթացքը նկատելի է նոյն տախտակից, եթէ թւերը նկատի առնենք ուրիշ խմբումներով։ 1—3 թիւը համարելով լաւագոյն աշխատութեան յայտաբար, մենք տեսնում ենք, որ անցեալ տարի վարժարանի 17 դասարաններն այսպէս են աշխատած. հոկտեմբեր-նոյեմբերին լաւ աշխատած են 2 դասարան, դեկտեմբերին 9, յունուար-փե-



տրուարին 12, մարտին 12, ապրիլ-մայիսին 10, յունիսին 6։ Պարզ երեւում է աշխատանքի ելեւէջը։ Այս տարւան պատկերը տարբեր է. հոկտեմբեր-նոյեմբերին 16 դասարաններից ոչ մէկը լաւ է աշխատած. դեկտեմբերին լաւ են աշխատած 3 դասարան, յունուար-փետրուարին 10 դասարան, մարտին 9 դասարան, ապրիլ-մայիսին 15 դասարան։ Շատ պարզ է աստիճանական յառաջդիմութիւնը և վերջին ճիգը։ Բ. կիսամեակի քննութիւնները, որ յունիս ամսւան տեղն են գրաւում, բոլոր կարգերի մէջ 1—2 թիւ են տուած, այսինքն նիշերի բարձրագոյն գումարները, մինչդեռ անցեալ տարի 1—6 էին։

Հետեւեալ թիւ 4 տախտակը ուրիշ կողմից պարզում է վարժարանի յառաջդիմութեան պատկերը։ Այս տախտակի հիմքը կազմում են ամեն մի աշակերտի շահած նիշերի գումարը երկամսեակների ընթացքին 11 առարկայից։ Այդ գումարների հիման վրայ պարզւում է թէ քանի՞ աշակերտ շահած են 60—70, քանի՞սը՝ 70—80 եւլն։ Լաւագոյն աշակերտները նրանք են, որ շահած են 100—110, այսինքն ամեն մի առարկայից 9 կամ 10։ Տախտակը նկատի ունի 194 աշակերտ։ Տարւան ընթացքին ելած կամ մտած աշակերտները նկատի չեն առնուած։

Դիտելով թիւ 4 տախտակը մենք տեսնում ենք, որ թոյլ աշակերտները տարւան սկզբին լինելով 9 հոգի, տարւան վերջին դարձած են 5. հետեւապէս 4 հոգի անցած են տկարների շարքը։ Տկար աշակերտները, որ տարւան սկզբին եղած են 43, տարւան վերջին դարձած են 23, հետեւապէս 20 հոգի անցած են միջակների շարքը։ Միջակ աշակերտները, որ սկզբում եղած են 73, վերջում դարձած են 62, այսինքն 11 աշակերտ անցած են լաւերի շարքը. Լաւ աշակերտները սկզբում 61 լինելով՝ վերջում դարձած են 75, իսկ լաւագոյնները 8-ից բարձրացած են 29-ի։ Ընդհանուր հաշւով 70 հոգի տեղահան են եղած, բարւոքելով իրենց վիճակը, որ վերին կարգի աշակերտների 36 առ հարիւրն է կազմում։ Ամփոփելով անցեալ տարւան թիւ 20 և 21 տախտակները, որ վերաբերում են վերին կարգերին, մենք տեսնում ենք, որ նոյն ձեւով տեղահան եղած են 67 հոգի, որ այն տարւան վերին կարգերի աշակերտների 36 առ հարիւրն է կազմում։ Կարելի է ուրեմն ասել, թէ աշակերտութեան մէկ երրորդից աւելին աշխոյժ է ցոյց տալիս ուսման մէջ, բարւոքելով իր կըր-

թական մակարդակը նկատելի չափերով։ Անկասկած միւս աշակերտներն եւս յառաջդիմած են, բայց իրենց տասնեակի սահմանում, այսինքն 80 շահողն, օրինակ, շահած է 83, 85, 87, 89, բայց դուրս չի եկած իր տասնեակի շրջանից, ուստի և չի մտած հետեւեալ շարքի մէջ, որ նկատելի և հաշուի առնելի։ Իբր ընդհանուր եզրակացութիւն կարելի է ասել նաեւ, որ վարժարանի մէջ ուսման գործը դառնում է աւելի հաստատուն, կարգին և յառաջընթաց, իսկ աշակերտների կրթական աշխոյժը մնում է նոյն աստիճանի վրայ։ Որքան յառաջդիմութիւնն անսայթաք լինի և աշակերտների աշխոյժը բարձր, այնքան վարժարանի կրթական վիճակը պէտք է գոհացուցիչ համարել։ Աւելի վճռական եզրակացութեանց հասնելու համար անհրաժեշտ են աւելի շատ տարիների վերաբերեալ թւական տեղեկութիւններ։

---

Վարժարանի կրթական մակարդակը բարձրացնելու նպատակով մենք այս տարւան համար հրաւիրած էինք մեծանուն թատերագիր և փորձւած մանկավարժ Պ. Լ. Շանթին՝ բարձր կարգերի հայոց լեզւի և Ընդհ. Պատմութեան դասերի համար։ Նրա ներկայութիւնը բարերար ազդեցութիւն ունեցաւ վարժարանի վրայ։ Նրա շնորհիւ քննութեան առնուեցան ծրագրային և մեթոդական մի շարք խնդիրներ։

Ֆրանսերէնի ուսուցումը զօրացնելու նպատակով մենք հրաւիրեցինք Օր. Մարի Թէրէզ Ժիւլիէն, ֆրանսուհի, շրջանաւարտ Աղեքսանդրիոյ ֆրանսական Լիսէի։ Այս քայլն արինք Թեմական Ժողովի մի վճռական որոշման հետեւանքով, որով մեր նախահաշիւը բարձրացաւ 4500 ռուբլու։ Օրիորդն իր դասաւանդութիւնն սկսաւ դեկտ. 1ին։ Մենք նոր դասաբաշխում կատարեցինք, ֆրանսերէնի դասաւանդութիւնը մի տարի առաջ քաշելով։ Մինչ այդ ֆրանսերէնն սկսւում էր Միջին Ա. դասարանից, այնուհետեւ սկսաւ Տարրական Գ. դասարանից՝ շաբաթական 3 պահով։ Մնացած բոլոր դասարանների մէջ շաբաթական 6 պահ ֆրանսերէնի դաս նշանակեցինք։ Տնօրէնութեանս առաջին տարին այդ դասա-



րան շաբաթական 3—4 պահ ունէր. երկրորդ տարին դարձրինք 4—5, երրորդ տարին 6-ական պահ և մի տարի շուտ սկսեցինք ֆրանսերէնի ուսուցումը։ Այս կարգադրութեանց արդիւնքը մասամբ երեւում է արդէն. աշակերտներն սկսած են ֆրանսերէն գրքեր կարդալ։ Այդ արդիւնքը շօշափելի կը դառնայ մի քանի տարի յետոյ, երբ այսօրւան տարրական Գ. դասարանի աշակերտները հասնեն Բարձրագոյն Բ., կամ որ նոյնն է 9րդ դասարան։ Այս տեսակէտից ազգային վարժարանների նպատակը պէտք է լինի օտար լեզւի ուսուցումը այն բարձրութեան հասցնել, որ մեր աշակերտները, առանց լեզւի պատճառով տարիներ կորցնելու՝ ուղղակի մտնեն օտար վարժարանի համապատասխան դասարանը։ Բոլոր միւս առարկաների կողմից մեր վարժարանը առաջ է քան քաղաքիս օտար վարժարանները. մեր թերութիւնը օտար լեզւի խօսակցութեան պակասն է, որ գնալով կը դարմանւի, եթէ աշակերտները մնան վերին կարգերում։ Աշակերտների թիւը նւազելով և դասատուն օտար լինելով՝ խօսակցութեան և հարցումի առիթները կը բազմանան, հետեւապէս աշակերտների լեզուն շուտով կը բացւի։

Ուսուցչական կազմը այս տարի եւս շարունակեց իր շաբաթական հաշւետւութիւնները մանկավարժական գրականութեան մասին։ Դասախօսները և նրանց մշակած նիւթերը նշանակւած են թիւ 5 տախտակի վրայ։ Մշակւած է 15 նիւթ և եղած են 24 դասախօսութիւն։ Երեք տարի շարունակ կարդալով և ուսումնասիրելով մանկավարժական գրականութիւն՝ մեր դասատուները գնալով հմտացան իրենց գործին և փոխադարձաբար ներշնչեցին իրար հետաքրքրութիւն դէպի վարժարանն ու աշակերտը։ Այս մթնոլորտի արդիւնք պէտք է նկատել և «Հայ Վարժարան» մանկավարժական պարբերականի հրատարակութիւնը, որին ձեռնարկեցին մեր դասատուներից Գ. Թադէոսեան, Հ. Սափրիչեան (Շէմս) և Բ. Թաշեան։ Այս ձեռնարկութիւնը, որ միակն է գաղութահայութեան մէջ, աստիճանաբար գրաւում է համակրանք թէ՛ հանրութեան մէջ և թէ՛ դասատուների շրջանում։

Մանկավարժական կենդանի հետաքրքրութեան և դպրոցասիրութեան արդիւնք պէտք է համարել նաեւ այն աշխատանքը, որ կատարած են Պ. Վ. Սրւանձտեանց և Հ. Սափրիչեան դպրոցական եղանակներ ու երգեր յօրինելով և յարմարեցնելով. Երկու

տարուան ընթացքին Պ. Վ. Սրուանձտեանց յօրինած է երեք ինքնուրոյն եղանակ և յարմարացրած է 18 ժողովրդական և դպրոցական եղանակներ. սրանցից 13 ֆրանսական, 4 գերմանական, 1 սկովտական։ Բոլոր եղանակների համար երգեր է յօրինել կամ փոխադրել Պ. Հ. Սաֆրիչեան, իսկ մէկի համար Զ. Պօլեան։ Այս աշխատանքը արժէք ունի ոչ միայն մեր վարժարանի, այլ հայ վարժարանների համար ընդհանրապէս։ Մի քանի դասատուներ պատրաստած են դասագրքեր, որ յուսով ենք առաջիկային պիտի յաջողուի լոյս ընծայել։

Այս տարի ևս ես շարունակած եմ իմ դասախօսութիւնները մանկավարժական հոգեբանութեան մասին՝ տարրական կարգերի դասատուներին։

Դասաւանդութեան մէջ նոր մեթոդների կիրարկութեան փորձեր են եղած, որ տուած են նկատելի արդիւնք։ Աշխարհագրութեան դասատու Պ. Բ. Թաշեան պահանջած է քարտէզներ գծել և տնտեսական կեանքի վերաբերեալ տախտակներ կազմել։ Աշակերտները սիրով աշխատած են քարտէզների վրայ և մի քանիսը մեծ յաջողութեան հասած։ Լաւագոյն քարտէզները ցուցադրուած էին ամավերջի հանդէսին։

Դեռ անցեալ տարի հրահանգած էի տարրական կարգերի վարժուհիներին կազմել «Լուսաբեր» այբբենարանի և առաջին տարուայ դասագրքի բառարանը։ Այդ հում նիւթը ես դասակարգեցի նկատի ունենալով բառերի գրութեան դժուարութեան աստիճանը թէ՛ ձայնաւորի և բաղաձայնի յաջորդութեան և թէ՛ լծորդ ձայների չփոթութեան տեսակէտով։ Այնուհետեւ հրահանգեցի դիւրին գրուող բառերն ուղղագրել տալ Տարրական Ա. դասարանի մէջ, միջակ դժուարութիւն ունեցողները Տարրական Բ.ի մէջ, իսկ աւելի դժուարները՝ Տարրական Գ.ի մէջ։ Դասատուները պէտք է այդ բառերի վրայ պարզ խօսքեր կազմէին և այդ խօսքերը ուղղագրել տային ամեն օր, հայոց լեզուի դասերին։ Պիտի ջանային շաբաթը 10—15 բառ ուղիղ գրել սովրեցնել և պիտի պահէին սխալների յատուկ հաշիւ՝ հետեւելու համար իւրացման ընթացքին։ Ընթացիկ կեանքի համար մարդս կարիք ունի ոչ աւել քան 1000—1500 բառի ուղղագրութիւնն իմանալու։ Այդքանը կարելի է իւրացնել տալ երեք-չորս տարուան ընթացքին։ Այս մեթոդը կիրարկեցինք սկսած մարտ ամսուան սկզբից և



տարուան վերջը լաւ արդիւնքի հասանք։ Եթէ որեւէ բառի ուղղագրութիւնը չէր իւրացւում մի շաբաթուան ընթացքին՝ նա անցնում էր հետեւեալ շաբաթ ուսանելիք բառերի շարքը։ Նոր բառերից խօսքեր կազմելու ժամանակ օգտագործւում էին արդէն իւրացուած բառերը։

Պարապմունքի նոր եղանակներ փորձեցինք՝ աշակերտների ինքնագործութիւնը զարգացնել ջանալով։ Մի քանի դասերի վերաբերմամբ աշակերտները աւելի ուսումնասիրող եղան քան դաս սերտող։ Դասաւանդական եղանակների հիմնական փոփոխութիւնը սակայն տարիների փորձ և վարժութիւն է պահանջում։ Մեր ստացած արդիւնքները գոհացուցիչ են թէ՛ ուսման և թէ՛ կարգապահութեան տեսակէտով։

Ես շարունակեցի աշակերտական զանգուածի ուսումնասիրութիւնը մտափորձերի (test) միջոցով, ուստի և նախորդ տարուան չափով չկարողացայ հետեւել դասատուների դասաւանդութեան. կար նաեւ այն հանգամանքը, որ ամենքի բարեխղճութեան չափը ճանաչում էի արդէն. իսկ մեթոդական խնդիրները քննում էինք խմբովին։ Տարուան ընթացքին լսած եմ 44 դաս և բացակաների փոխարէն պարապած եմ 20 պահ։ Պ. Գ. Թադէոսեան պարապած է 10 ժամ։ Միւս դասատուները փոխարինած են միմեանց, երբ կարիք է եղած։

Աշակերտների ուսումնասիրութեան գործի մէջ ինձ օգնեցին Պ. Գ. Թադէոսեան և Հ. Սաֆրիչեան, իսկ արդիւնքի ամփոփման համար Պ. Ա. Մարգարեան, Զ. Պօլեան և բարձր կարգերի մի քանի աշակերտ։ Մի քանի դասարաններ մտափորձի ենթարկեցան անմիջական ընկալումի չափը որոշելու համար։ Արտասանւում էր մի տուն անծանօթ ոտանաւոր և հաշւի էր առնւում թէ քանի՞ անգամ կրկնելուց յետոյ աշակերտները կարողանում են իւրացնել։ Փորձը ցոյց տուեց, որ երբ որեւէ հատուած մի անգամ կրկնում են խմբովին՝ աւելի շուտ են միտք պահում։ Տարրական կարգերը փորձի ենթարկեցան ուղղագրական տեսակէտով։ Գրութեան տարբեր դժուարութիւն ունեցող 24 բառ ուղղագրեցան տարրական ութ դասարանների մէջ։ Փորձն այստեղ ևս ցոյց տուեց, որ երբ ուղղագրելիք բառը մի անգամ կրկնում են խմբովին՝ աւելի քիչ սխալ են անում։ Այս նիւթերը սակայն հարկ եղած մշակման չենթարկեցին։ Այնուհետեւ թե-

թանութեան մտափորձի ենթարկեցինք վարժարանի աշակերտութիւնը սկսած Տարր. Գ. դասարանից։ Այս մտափորձի արդիւնքը մանրամասն մշակեց և 18 տախտակներով ցուցադրուած էր ամավերջի հանդէսին։ Այս մասին մանրամասն խօսք կը լինի զեկուցմանս կցած յաւելուածի մէջ։

Բարձր կարգերին վերաբերող կրթական և կարգապահական խնդիրների քննութեան համար յատուկ խորհրդակցութիւն ունեցանք այդ դասարանների դասատուների, դաստիարակների, Պ. Ա. Մարգարեանի, Պ. Գ. Թագւորեանի և իմ մասնակցութեամբ։ Դա լաւագոյն առիթն եղաւ ճանաչելու դասարանների ընդհանուր վիճակը, միատեսակ կարծիք կազմելու աշակերտների մասին և միատեսակ պահուածք ունենալու նրանց հանդէպ։

Աշակերտների մտաւորական կրթութեանը մի նոր զարկ տուեց աշակերտական գրադարանը, որ այս տարի կարգի գրուեց Պ. Հ. Սափրիչեանի և բարձրագոյն կարգի մի քանի աշակերտների շնորհիւ։ Վարժարանի գրադարանից զատեցին այն բոլոր գրքերը, որ մատչելի էին աշակերտների ընթերցանութեան. Նուէր ստացանք և գնեցինք բաւական թւով հայերէն և ֆրանսերէն գրքեր. Մատենադարանը յանձնուած էր բարձրագոյն դասարանի աշակերտուհիներից Ս. Շատախցեանին։ Պ. Հ. Սափրիչեան հսկում էր գործավարութեան. Աշակերտները կազմեցին գրքերի մի մասը և միւս մասը կ'ուղարկեն այս ամառ։ Գրադարանն ունի յատուկ պահարան, որ փոքր է արդէն եղած գրքերի համար։ Դժբախտաբար արեւմտահայ գրականութեան մէջ մանկական գրքեր չկան։ Եղածներն աւելի պատանեկան ընթերցանութեան են յարմար։ Ինչ որ հնար էր՝ հաւաքեցինք. առաջիկային մտադիր ենք հարստացնել մեր գրադարանի այս բաժինը. Առայժմ ունինք 258 կտոր հայերէն և 68 հատ ֆրանսերէն գրքեր, ընդամենը 326 գիրք. Գրադարանն սկսած է գործել փետրուար ամսին. Նախ սկսում են գիրք առնել բարձր երկու դասարանները և փետրուարի ընթացքին կարդում են 70 գիրք, որոնցից 48 հայերէն և 22 ֆրանսերէն. Հետեւեալ ամսին վարակւում է և միւս բարձր դասարանը. մարտին երեքը միասին կարդում են 108 գիրք, որոնցից 87 հայերէն և 21 ֆրանսերէն։ Այս նոր դասարանը կարդում է միայն հայերէն, որովհետեւ երրորդ տարին է ֆրանսերէնն ուսանում։ Հետեւեալ ամսին նոյն երեք դասարաններն են կար-



դում, բայց միմիայն հայերէն. Մայիս ամսին վարակւում է և Միջին Ա՛ դասարանը և կարդում է 28 հայերէն գիրք. Չորս դասարանները միասին այդ ամսին կարդում են 145 հայերէն և 19 ֆրանսերէն գիրք. Հետաքրքրական է կարդացած հայերէն գրքերի աճումը — 70, 87, 91, 145 և ֆրանսերէն գրքերի աննշան նուազումը — 22, 21, 19։ Կարդացուած է ընդամենը 92 անուն հայերէն և 16 անուն ֆրանսերէն գրքեր, ընդամենը 108, որ գրադարանի մէկ երրորդն է կազմում. Թէեւ ունինք թւական տեղեկութիւններ այն մասին թէ ո՛ր գիրքը քանի՛ անգամ է կարդացուած, բայց գրադարանի գործունէութիւնը կարճատեւ լինելով՝ վճռական եզրակացութեանց համար բաւական նիւթ չի տալիս։ Նկատենք յամենայն դէպս, որ ամենից աւելի կարդացել են «Ութ Հէքեաթներ»ը (հրատ. Ա. Զարըզի) 30 անգամ և Անտէրսընի «Ծովին աղջիկը» 18 անգամ, իսկ ֆրանսերէն «Désobéissance Criminelle» — 10 անգամ։

Աշակերտների ընթերցանութիւնը նոր երեւոյթ է մեր վարժարանի մէջ։ Համայնքն ընթերցասէր չէ. Ծնողների կէսից աւելին լրագրի երես իսկ չեն տեսնում, ո՛ւր մնաց գրքի։ «Ազգային մշակոյթ» նշանակում է նաեւ գրականութիւն, իսկ գրականութիւն պահելու համար պէտք է ընթերցող հասցնել։ Վարժարանների նպատակներից մէկը, եթէ ոչ առաջինը, պէտք է լինի գրասիրութիւն արծարծել աշակերտների մէջ։ Դասերն այդ պաշտօնը կատարել չեն կարող, նրանք վարժեցնում են դաս կարդալու և ոչ ազատ ընթերցանութեան, որ մտաւորական զարգացման հզօրագոյն զէնքն է ոչ միայն վարժարանի մէջ, այլ մանաւանդ դպրոցից դուրս։ Այս գործին զարկ կը տրուի առաջիկայ տարին.

Աշակերտների մտաւորական զարգացմանը նպաստելու դիտումով մենք քաջալերեցինք միջոց ունեցողներին գնալ Գահիրէ և այցելել գիւղատնտեսական և ճարտարարուեստական ցուցահանդէսը։ Դժբախտաբար մենք նիւթական միջոցներ չունէինք բարձր կարգերի բոլոր աշակերտներին ուղարկելու Գահիրէ։ Գնացողները շատ չեղան, ընդամենը 12 հոգի։ Նրանց ընկերացան Պ. Գ. Թագւորեան, Տիկ. Վ. Տէրպէտէրեան և Պ. Զ. Պալեան. Գալստեան վարժարանի տնօրէնութիւնը ձեռքից եկածը չխնայեց օգնելու մերոնց՝ Գահիրէի մէջ։ Աշակերտները ոչ միայն

ցուցահանդէսն այցելեցին, այլեւ բուրգերը, եգիպտական հնութեանց թանգարանը եւն։

Քաղաքական Ժողովի և Հոգաբարձութեան հետ համախորհուրդ առաջիկայ տարին մենք պիտի բանանք 9րդ դասարան, որ կը լինի վերջինը մեր վարժարանի մէջ։ Այս աննախընթաց քայլը եգիպտահայ միջավայրի մէջ հնարաւոր դարձաւ այն պատճառով, որ առաջիկայ տարին մեր դասարաններից մէկը պիտի կարենանք պակասեցնել։ Մինչեւ այսօր մենք ունեցած ենք 3 հատ Միջին Ա. դասարան. առաջիկայ տարին կ'ունենանք 2 հատ։ Հետեւապէս նոյն ուսուցչական կազմով և նոյն ծախսով մենք կարող ենք մի նոր դասարան եւս պահել։ Իններորդ դասարան բանալով՝ մեր վարժարանը կը հաւասարի Ռուսաստանի հայոց թեմական դպրոցներին։ Ազգային Իշխանութիւնը և Տնօրէնութիւնը վճռած են բանալ այդ դասարանը առանց ուշադրութեան առնելու աշակերտների թիւը։ Մենք համոզուած ենք թէ սկզբում նուազ՝ այդ թիւը գնալով պիտի մեծանայ, երբ հանրութեան համար լիովին պարզուին իննամեայ ազգային կրթութեան օգուտները։ Աւելի բարձր կրթութիւն տալու համար ոչ գաղութը բաւական աշակերտ կարող է տալ, ոչ համայնքը նիւթական միջոցներ։ Լիակատար երկրորդական վարժարանի պակասորդ դասարանները կարելի է ստեղծել ու պահել երկու համայնքների գործակցութեամբ և նիւթական միջոցներով։ Եթէ մեզ յաջողի ազգային վարժարանի իննամեայ դասընթացքը դարձնել կայուն և տեւական, դրանով իսկ մեծապէս նպաստած կը լինենք մեր գաղութի ազգային կերպարանքի պահպանման գործին։

Անցեալ տարի անկարող լինելով 9րդ դասարան բանալ, մենք աւարտական վկայական տուինք 8րդ դասարանից ելնողներին։ Աշակերտուհիներից երկուսին, որ դասարանի լաւագոյն ուժերն էին՝ Ա. Շատախեան և Ս. Ադամեան՝ Ազգային Իշխանութիւնն իր ծախսով դրաւ Պիժիէի առեւտրական վարժարանը։ Նրանք մտան այդ վարժարանը նոյեմբեր ամսին, այսինքն մեր վարժարանը թողնելուց 4 ամիս յետոյ։ Նրանցից Ս. Ադամեան, որ մեզ մօտ լաւագոյն էր ֆրանսերէնի մէջ, առաջին իսկ ամսին այդ առարկայից շահած է 14՝ 20ի վրայ, լինելով ֆրանսերէն իմացող աշակերտների շարքում։ Իսկ միւսը, որ ֆրանսերէնից զօրեղ չէր մեր վարժարանում, ֆրանսերէն չիմացողների շար-



քում շահած է 5՝ 20ի վրայ։ Ահա երկու աստիճան ֆրանսերէնի գիտութեան, որ սովորած են մեր վարժարանի մէջ։ Այստեղ կարեւորը առաջին թիւն է. նշանակում է մեր վարժարանի մէջ կարելի է այնքան ֆրանսերէն սովորել, որ օտար վարժարանի մէջ շահին 14։ Եւ սրանք այն աշակերտներն են, որ շաբաթական 3—5 դաս են ունեցած ֆրանսերէնից։ Մեքենագրութիւնից, որ մեզ մօտ ուսած էին մի տարի միայն, նրանք առաջին իսկ ամիսը շահած են 18՝ 20ի վրայ։ Իսկ անգլերէնից, որ ուսած էին երեք տարի և շաբաթական երեք պահ, նրանք առաջին ամիսը շահած են 15 և 16։ Առեւտրական թուաբանութիւնից նրանք նոյն ամսին շահած են 14։ Մենք դիտմամբ առնում ենք առաջին ամսուան նիշերը, որ եզրակացութիւնը պարզ լինի։ Դպրոցը թողնելուց 4 ամիս յետոյ մեր աշակերտները մեր վարժարանի մէջ ձեռք բերած գիտութեամբ և աշխատանքի ունակութեամբ կարողացած են շատ բաւարար նիշեր ստանալ օտար վարժարանի մէջ մինչեւ իսկ օտար լեզուից։ Արդ՝ կա՛մ Պիժիէի վարժարանը մի անարժէք հաստատութիւն է, կա՛մ մեր վարժարանը բաւական պատրաստութիւն է տալիս իր սաներին՝ հակառակ իր նիւթական նեղ պայմաններին։ Պէտք է կարծել, որ անարժէք վարժարան չէ Պիժիէի հաստատութիւնը, քանի որ աւելի քան 20 ոսկի են վճարում տաս ամիս այնտեղ ուսանելու համար։ Եթէ այդպէս է, ապա պարտադրաբար ճիշդ է և միւս պնդումը մեր վարժարանի մասին։ Դժուար չէ ուրեմն մեր վարժարանը օտար լեզուի տեսակէտով բարձրացնել մինչ այն աստիճան, որ յետ չմնայ օտար վարժարաններից։ Սրա համար պէտք է կամք և նիւթական միջոց։ Մեր վարժարանի տուած պատրաստութեան մասին կարելի է գաղափար կազմել և այն երկու աշակերտների յառաջդիմութիւնը դիտելով, որոնք մտան ֆրանսական Լիսէի առեւտրական ճիւղը «Տիգրան-Երկաթ» Հայ Երիտասարդաց Միութեան օժանդակութեամբ։ Նրանք եւս անցեալ տարի աւարտեցին մեր վարժարանը։ Գիտութեամբ շատ բարձր իրենց ընկերներից նրանք կարճ ժամանակուան ընթացքին դարձան 60 աշակերտի մէջ 18րդը։ Հրաշքների դարն անցած է. այս յաջողութեան նրանք հասած են մեր վարժարանի մէջ ձեռք բերած պատրաստութեան շնորհիւ։ Այս պատրաստութիւնը օտար լեզուի տեսակէտով շատ աւելի բարձր կը լինի առաջիկային, որովհետեւ ա-

շակերտները շատ աւելի երկար ժամանակ կը մնան մեր վարժարանում և օտար լեզուն աւելի շատ պահերի ընթացքին կը սովորեն։ Եղած յաջողութիւնն արդէն անուղղակի գնահատանք է մեր աշխատութեան և պատասխան՝ մեր չարախօսներին։

Կարծում ենք պէտք է սովորութիւն դարձնել համայնքի հաշուին երկրորդական լրիւ ուսում տալու օտար վարժարանների մէջ այն աշակերտներին, որոնք յաջողապէս կ՚աւարտեն մեր 9րդ դասարանը։ Այս կարգադրութիւնը շատերին կ՚ստիպէ մինչև վերջը մնալ մեր վարժարանում, ինչ որ մեծ շահ է ազգային տեսակէտով։ Չեմ կարծում, որ այս քայլը մեզ վրայ մեծ ծախս նստի։ Այդ ծախսին պէտք է նայել այն աչքով, իբր թէ մենք 10րդ դասարան ենք բացած։

---

Թոշակների խնդիրը այս տարի էլ մնաց նոյն անմխիթար վիճակում, որի մասին խօսած եմ անցեալ տարուան տեղեկագրիս մէջ (էջ 54—57)։ Անհատ աշակերտների վճարած թոշակի և նրանց ընդհանուր գումարի տեսակէտով կացութիւնը մինչև իսկ վատթարացած է։ Միակ բարւոքումը, որ նկատելի է այս խնդրի մէջ, մանր տարբերութեանց չքացումն է, որի վերացման մասին յոյս էի յայտնած անցեալ տարի։ Բոլոր կարգի վճարողները այս տարի պակաս են վճարած քան անցեալ տարի։ Անցեալ տարի ամսական 5 դահ. վճարում էին 9 հոգի, այս տարի 27 հոգի. 10 դահեկան վճարում էին 144 հոգի, այս տարի 133 հոգի. 15 դահ. վճարում էին 82 հոգի, այս տարի 76. 20 դահեկան՝ 92 հոգի, այս տարի 82. 25—30 դահ. վճարում էին 66 հոգի, այս տարի 56 հոգի. վերջապէս 35—40 դահ. վճարում էին 7 հոգի. այս տարի 9 հոգի, որ մի աննշան շահ է այնքան կորուստների համեմատութեամբ։ Նկատեցէք, որ վճարող աշակերտների քանակը մնացած է անփոփոխ, թէ՛ անցեալ և թէ՛ այս տարի 384 է։ Ուրեմն վճարների նուազումը չի հաւասարակշռուած վճարողների յաւելումով, ուստի մեր թոշակների նուազումը դառնում է բացարձակ։

Վճարող աշակերտների թիւն անփոփոխ է մնացել, բայց



վճարող ծնողների թիւը պակսած է. անցեալ տարի նրանք 268 հոգի էին, այս տարի դարձած են 251, այսինքն 17 հոգով պակսած է նրանց թիւը։ Այս պատճառով պակսած է նաև թոշակների ընդհանուր գումարը։ Անցեալ տարի 268 ծնողի վրայ բաշխուած էր 29838 դահ., հետևապէս մարդագլուխ 224 դահ., իսկ այս տարի բաշխուած է 50215 դահ., հետևապէս մարդագլուխ 200 դահ.։ Ուրեմն ոչ միայն վճարող ծնողն է պակսել, այլև մնացածները պակաս են վճարում քան անցեալ տարի։ Եթէ թոշակների գումարը բաժնենք վճարող աշակերտների թուի վրայ, կը տեսնենք, որ անցեալ տարի ամեն մի աշակերտ միջին հաշուով վճարած է 156 դահ., իսկ այս տարի 130։ Այսինքն ծնողները մեր վարժարանին տարեկան վճարում են այնքան, որքան շատերը նրանցից օտար վարժարանին տալիս են ամսական։ Հասոյթի տեսակէտով մխիթարական չի կարող համարել այն հանգամանքը, որ անցեալ տարի աշակերտութեան 51,6 առ հարիւրն էր վճարող, իսկ այս տարի 53,3 առ հարիւրը։

Սակայն թոշակ բաշխել դեռ չի նշանակում գանձել։ Եթէ մեր բոլոր վճարող աշակերտները ամբողջ տարին վարժարան գային և անթերի վճարէին իրենց թոշակը, մեր հասոյթը ամսական պիտի լինէր 61 ոսկի, այսինքն տարեկան 54900 դահ.։ Այս գումարն արդէն 51 ոսկով պակաս է քան թոշակների նախահաշուած գումարը, որ 600 ոսկի է։ Բայց աշակերտներից ոմանք հրաժարած են տարւայ ընթացքին, ոմանք մտած են տարուան կէսին, մի երկու հոգի ճանաչուած են վճարելու անկարող։ Այս բոլոր նկատումներով մեր գանձելիքը պակսում է 4685 դահ., որով իսկապէս բաշխուած է 50215 դահ.։ Բայց այս գումարն իսկ լիովին չի գանձուած։ Առ 1-ն յուլիսի դեռ ևս չէր գանձուած 6185 դահ. թոշակ, որ թոշակների 12,3 առ հարիւրն է. անցեալ տարուան չգանձուած գումարը կազմում էր 12 առ հարիւր։ Այսպիսով թոշակ գանձուած է ընդամենը 44030 դահ.։ Թոշակները մեր տարեկան ծախսի հազիւ 10 հարիւրն են գոցում, հետևապէս իմ առաջին տարուան տեղեկագրի մէջ մատնանշած երևոյթը մնում է կայուն. այս համայնքի անդամները — նիւթապէս կարող թէ անկարող — ազգային սնտուկի հաշուին են զաւակներ կրթում, քանի որ ամեն մի աշակերտ մեզ վրայ նստում է 636 դահ. և փոխարէնն ստանում ենք 130—156 դահեկան։

Ոմանք պատճառաբանում են տնտեսական տագնապը, որ սակայն սկսւում է Առաջնորդարանի չէմքին և վերջանում օտար վարժարանի դրան առջև։ Ոմանք այն կարծիքն ունեն, որ ազգային կրթութիւնը պէտք է ձրի լինի. բայց մոռանում են, որ եթէ ազգը պարտականութիւն ունի իր անդամների հանդէպ, անդամները նոյնպէս պարտականութիւն ունին ազգի հանդէպ։ Եթէ 1600 ընտանիք միջին հաշւով տարեկան մէկ ոսկի ազգային տուրք վճարեն, ոչ միայն ազգի բոլոր զաւակները ձրի կրթութիւն կ'ստանան, այլև անունդ ու գրենական պիտոյքներ։ Ամենից անտանելին նրանք են, բարեբախտաբար շատ սակաւաթիւ, որ արժանապատւութեան խնդիր են յարուցանում, երբ նրանցից պահանջւում են յետնեալ թոշակները. Մարդիկ ամիսներով թոշակ չեն վճարում։ Մարտի 12ին և մայիսի 20ին գրաւոր ազդարարութիւն է ուղարկւում թերացողներին, որ եթէ իրենց պարտքը չհատուցանեն՝ զաւակները տուն կը ճամբեն և երբ կատարւում է անխուսափելին՝ յանցաւորն Ազգային իշխանութիւնն է համարւում։ Այս մտայնութիւնը անյաղթելի չէ. պէտք է կոտրվի կեցւածք և, ինչպէս կ'ասեն, ջուրն իր ճամբան կը գտնի։

---

Թեմական ժողովը վարժարանի այս տարուան ծախսերի համար քւէարկած էր 4500 ոսկի։ Այս գումարի դէմ նախահաշւած էր մուտք — 600 ոսկի թոշակներից, 50 ոսկի ձեռագործների վիճակահանութիւնից, 50 ոսկի դասագրքերի և գրենական պիտոյքների վաճառքից և 20 ոսկի Պօղոս փաշա Նուբարի նւէրը — ընդամէնը 720 ոսկի. հետևապէս կալւածական եկամուտներից տալու էր 3780 ոսկի։ Ինչպէս տեսանք՝ նախահաշուի համեմատութեամբ թոշակ գանձւած է 15970 դահ. պակաս։ Արդէն նախահաշւած 600 ոսկին լիովին բաշխւած չէր, այլ ընդամենը 50215 դահ., որ տոել է 9785 դահ. պակաս։ Թւում է թէ համայնքը 500 ոսկուց աւելի թոշակ վճարելու կարողութիւն կամ տրամադրութիւն չունի, ուստի շատ բնական է, որ առաջիկայ



տարուան նախահաշուի մէջ թոշակներից հասոյթ նշանակւած է 565 ոսկի։ Հասոյթի միւս աղբիւրներից Պօղոս փաշա Նուբարի նւէրը գանձւած է, իսկ ձեռագործների վիճակահանութիւնը և գրենական պիտոյքների ու դասագրքերի վաճառքը հասոյթի աւելցութիւն են տւած. առաջինը 2522 դահ., իսկ երկրորդը 4920 դահ., ընդամենը 7442 դահ. աւելի քան նախահաշւած էր։

Սրանով մասամբ գոցւած է թոշակների առեղծած բացը։ Պակասորդի միւս մասը գոցւած է չնախատեսւած մուտքերով, որ հասնում են 11361,5 դահեկանի։ Այս նոյն հասոյթով է գոցւում և ծախսի աւելցութիւնը, որ 2334,5 դահեկան է։

Եթէ փոքր ինչ մօտից քննենք մեր հաշւեկշիռը՝ կը տեսնենք, որ ազգային սնտուկն ստացած է 41030 դահ. թոշակ. սպասւում էր 100 ոսկի գրենական պիտոյքներից և ձեռագործների վիճակահանութիւնից և 20 ոսկի նւէր, ընդամենը 56030 դահ. և ծախս նախատեսնում էր 4500 ոսկի. հետևապէս նա պէտք է կալւածական հասոյթներից տար 393970 դահ. իրօք նա տւած է 382162 դահ., այսինքն 11808 դահ. պակաս. որ նշանակում է բացառիկ եկամուտների շնորհիւ ազգային սնտուկը պակաս է ծախսած քան պարտաւոր էր։ Եթէ նկատի ունենանք, որ թոշակներից գանձելի մնում է 6185, որից հաւանօրէն 30 ոսկին կը գանձւի վերամուտին, իսկ Պ. Կ. Մելքոնեանի նւէրից կանխիկ ունինք 4661, այն ժամանակ այդ խնայողութիւնը աւելի կը մեծանայ հասնելով 19469 դահ.ի։ Այսպիսով թէև մեր նախահաշիւը անւանապէս 4500 ոսկի է, բայց փաստօրէն ազգային կալւածական հասոյթներից այդքան գումար տրւած չէ, այլ 372699 դահ., այսինքն շատ աւելի պակաս քան պիտի տար ազգային սնտուկը, եթէ մինչև իսկ 600 ոսկի լրիւ թոշակ գանձած լինէր։ Եւ յետոյ՝ մեր ծախսը նախատեսածից 23 ոսկի աւելի է, բայց այդ աւելցուկը չի ծանրացած ազգային սնտուկի վրայ։

Ինչպէս տեսանք, ըստ նախահաշուի՝ մեր եկամուտներից ազգային սնտուկը իրաւունք ունէր քաշելու թոշակների 44030 դահ.ը, վիճակահանութեան և գրենական պիտոյքների հասոյթի 100 ոսկին և նւէրներից 20 ոսկի, ընդամենը՝ 56030 դահ., որ գումարելով կալւածական հասոյթներից տւած 382162 դահ.ի վրայ՝ կստանանք 438192 դահ.։ Արդ՝ այս գումարից պաշտօնէութեան տւած է 425400, իսկ այդ երկու գումարների տարբե-

րութեան մի մասը 4661 մնում է կանխիկ, ուրեմն վարժարանի ընթացիկ ծախսերի համար տրամադրելի գումարը եղած է 8131 դահ., մինչդեռ մենք ծախսած ենք 26934,5 դահ.։ 18803,5 դահ, անհրաժեշտ ծախսերը մենք արած ենք բացառիկ եկամուտների հաշւին։

Գործավարութեան այս ձեւը ես համարում եմ ոչ բանաւոր։ Ազգային իշխանութիւնը պարտաւոր է հաստատել նախահաշւած գումարը և գանձել նախահաշւած մուտքերը։ Վարժարանի բացառիկ հասոյթները պէտք է մնան անօրէնութեան տրամադրութեան տակ՝ վարժարանի բարեզարդութեան և բազմապիսի այլ կարիքների վրայ ծախսելու համար։ Առաջիկայ տարւան նախահաշւի մէջ, որ 4470 ոսկի է, այլեւայլ ծախսեր նախահաշւած են 165 ոսկի։ Արդ՝ եթէ այս 165 ոսկին մեզ տրւի լիովին, մեր բացառիկ հասոյթների հետ միասին մենք բաւական խոշոր գումար կ՚ունենանք մեր բազմապիսի կարիքները հոգալու համար։ Այս տարւան նախահաշւով մենք ընթացիկ ծախսերի համար պէտք է ստանայինք 246 ոսկի, մեր բացառիկ եկամուտներից դուրս գալով այն 120 ոսկին որ նախատեսւած էր նախահաշւի մէջ, մենք յաւելեալ հասոյթ ունեցած ենք 18803,5 դահեկան. այդ երկու գումարները միասին 43403,5 դահեկան են։ Այսքանը մեր իրաւունքն էր ծախսելու վարժարանի պէտքերի համար, մինչդեռ մենք ծախսած ենք 26934,5. դրանց տարբերութիւնը, որ 16469 դահ. է, ծառայած է ազգային սընտուկի բացը գոցելու։ Արդ՝ իրաւացի՞ է, որ աշակերտները վիճակահանութիւն կազմակերպեն և նրա հասոյթը փոխանակ վարժարանը բարեզարդելու, ծառայէ իբրեւ խնայողութեան միջոց ազգային սնտուկի համար։ Այս կէտը ոչ միայն իրաւական է և հաշւական, այլ մանաւանդ բարոյական։ Ազգային իշխանութիւնը պարտաւոր է վարժարանի պաշտօնէութիւնը վարձատրել և ընթացիկ ծախսերը հոգալ։ Եթէ նա չի յաջողում թոշակների նախահաշւած գումարը բաշխել կամ բաշխած գումարը լիովին գանձել, դրա պատասխանատուն ինքն է կամ աւելի շուտ անպարտաճանաչ ծնողները, բայց բնաւ՝ վարժարանի բացառիկ հասոյթները։

Դառնալով նորից մեր հաշւեկշռին՝ մենք տեսնում ենք, որ մուտքի բաժնի մէջ պատկառելի տեղ է գրաւում Պ. Կ. Մելքոնեանի նւէրը՝ 75 ոսկի, որ տրւած էր չքաւոր աշակերտների



օգտին։ Այդ նւէրը մենք ուշ ստացանք։ Չքաւոր երեխաներին արդէն հագուստ և այլ իրեր տւած էին թէ՛ Գեղարուեստասէր Հայուհեաց Միութիւնը, թէ՛ Լիսէի Շրջանաւարտների Միութիւնը և թէ Առաջնորդարանը։ Միւս կողմից այդքան մեծ գումար պարբերաբար ստանալու յոյս չունէինք։ Եթէ միանգամից ծախսէինք, աշակերտների մէջ անհիմն յոյսեր պիտի արթնցնէինք յետագայ տարիների համար, առանց վստահ լինելու սակայն թէ պիտի կարենանք արդարացնել այդ յոյսերը։ Ուստի յարմար տեսանք Պ. Կ. Մելքոնեանի նւէրի հաշւին բաշխել այն գրենական պիտոյքները և դասագրքերը, որ վարժարանն ամեն տարի սովորաբար տալիս է ձրիավարժ աշակերտների մի մասին։ Այս տարի բաշխւած է 2839 դահ. գրենական պիտոյք և դասագիրք. Մնացորդ գումարի դէմ կը բաշխենք առաջիկայ և հետեւեալ տարին։ Սրանով չի խախտւի երկու տարւան մեր յամառ աշխատանքի արդիւնքը, որով հազիւ վարժեցրած ենք տարրական կարգերի աշակերտների ծնողներին անխտիր՝ իրենց միջոցներով հոգալու իրենց զաւակների դասագրքերը, որ աւելի չարժեն քան 6—10 դահ.։ Այսքան չնչին գումար ամեն մի ծնող պարտաւոր է ծախսել իր զաւակի կրթութեան համար, որքան և նա չքաւոր լինի։

Արմենակ բէյ Կամսարականի պարբերական նւիրատւութիւնը ծախսւած է իր նպատակին — Նոր Տարւան տօների առիթով պտուղ է բաշխւած աշակերտներին։ Պ. Ոմնի և Պ. Ս. Սիրաքեանի նւէրով գնւած են մրցանակի առարկաներ և բաշխւած ամավերջի հանդէսին։ Շրջանաւարտուհիների Միութեան նւէրը ծախսւած է աշակերտական գրադարանի համար։ Մամբրէ Ծ. վ. Սիրունեանի նւէրը, որ ձեռագործի վիճակահանութեան վերադարձրած հինգ ամսի արժէք է, համարւած է վիճակահանութեան հասոյթ։ Սրահի վարձքն այս տարի պակաս է քան անցեալ տարի, որովհետեւ ընտրական պայքարի հետեւանքով հանդէսներ և ներկայացումներ քիչ տեղի ունեցան։ Գրենական պիտոյքների հասոյթի բաժնին մէջ գրւած է նաեւ «գրքերի վարձք», «դասատուներից ստացւած»։ Ընդհանուր պատմութեան հայերէն դասագրքեր չկան։ Մենք հազիւ կարողացանք 7—8 հատ գտնել Գ. Խաժակի գրքերից, ուստի ստիպւած եղանք ոչ թէ ծախելու, այլ վարձու տալու աշակերտներին մի տարւան համար։ Առաջիկայ տարին ստիպւած ենք նոյն միջոցին դիմելու։

Այդ վարձքն է, որ յիշատակուած է մուտքերի բաժնում։ Գալով դասատուներից ստացած գումարին, որ 666 դահ. էր, այդ այն դրամն է, որ դասատուները վճարած են իբր իրենց անձնական գործածութեան համար բերել տուած գրքերի փոխարժէք։

Ելքի բաժնին մէջ բացատրութեան կարօտ է բացառիկ վարձատրութեան յօդուածը։ Այդ վարձատրութիւնը տրուած է Պ. Բ. Թաշեանին իր արտագրական աշխատանքների համար, Պ. Հ. Փանոսեանին՝ բեմի տեսարանները նկարելու համար և Պ. Պ. Տէր-Գասպարեանին՝ իբր օժանդակութիւն իր հիւանդութեան ժամանակ։ Կարասիների ծախսի մէջ մտնում է 1200 դահ. Մանկապարտէզի դաշնակի նորոգութեան համար։ Տպագրական ծախսերի մէջ խոշոր գումարը տրուած է Տեղեկագրի տպագրութեան համար։ Իբր գրքերի ծախս նշանակուած գումարի մէջ մտնում են թէ՛ դպրոցական և աշակերտական գրադարանի գրքերի, թէ՛ գրենական պիտոյքների, թէ՛ պարբերականների բաժանորդագնի և թէ անձնական գործածութեան համար գնած գրքերի փոխարժէքը։ Մնացած յօդուածները բացատրութեան կարիք չունեն։

Փակելով տեղեկագրի այս բաժինը, կարող ենք ասել, որ հիմնական երեք յօդուածներով — վիճակահանութիւն, գրքերի վաճառք և նուէր — մեր հասոյթն այս տարի շատ աւելի մեծ է քան նախահաշուած էինք այս տարուան համար և քան ունեցած էինք անցեալ տարի։

---

Սովորական տարիների նման աշակերտները նաև այս տարի կազմեցին իրենց հանդէսները Նոր Տարուան տօների առիթով։ Մանկապարտէզը, տարրական կարգերը և վերին կարգերն ունեցան զատ զատ հանդէսներ, որի ընթացքին չոր պտուղ բաժնուեց նրանց։

Տարուան ընթացքին իրաւունք տուինք երկու ձեռնածուների ցուցադրել իրենց շնորհքը աշակերտների առջև շատ համեստ վճարով։ Այդ տեսակ ցուցադրութիւններ նրանք կատարած էին քաղաքիս և Գահիրէի շատ վարժարանների մէջ։ Զբօսանքների



տոմսերը հոգաց աշակերտական խանութը։

Մայիսին աղջիկներն ու մանչերը, Տարրական Բ. դասարանից վեր, զատ-զատ խմբերով գնացին Նուզհա իրենց գարնան զբօսանքին։ Վերին կարգի աղջիկները Տիկ. Զ. Պօղոսեանի ցուցմունքներով իրանք պատրաստած էին խմօրեղէն, որ մի տեսակ համարատուութիւն եղաւ տնտեսագիտութեան դասերի։ Աշակերտներն այս տարի աւելի շատ դաստիարակներ հիւրասիրեցին իրենց սեղանին, որ նշան է աճող մտերմութեան։

Մանչերից 34 հոգի անցեալ տարուան նման կազմած էին երգչական խումբ, որ երգում էր եկեղեցում Պ. Գ. Մէհտէրեանի ղեկավարութեամբ։ Նոյն խմբի մի մասը մեծ պասին երգում էր նաև արևագալի ժամերգութեան ընթացքին։

Աշակերտները խմբովին հաղորդութիւն առան Ծնունդին և Զատկին և ներկայ եղան վարժարանիս բարերար բարեյիշատակ Պօղոս բէյ Եուսուֆեանի հոգեհանգստեան հանդէսին, ուր նրանցից մէկը կարդաց Պ. Ս. Պետրոսեանի ձօնը բարերարի յիշատակին, իսկ վարժարանի երգչական խումբը երգեց ազգային երգեր։

Այս տարի մեր վարժարանը բաժանորդագրեցինք չորս թերթի. Մէյէի խմբագրութեամբ լոյս տեսնող «Revue des études arméniennes», «Հանդէս Ամսօրեայ»ին, «Հայ Վարժարան»ին և «L'école et la Vie» մանկավարժական հանդէսին։

Ամավերջի հանդէսներն այս տարի յարմար տեսանք երեք անգամով անել. Մանկապարտէզի հանդէս, որ տեղի ունեցաւ Յունիս 27ին, Մարզանքի հանդէս, որ կատարեցին Յուլիս 4ին։ Այս երկու հանդէսներից ամեն մէկին ներկայ լինելու համար պէտք էր իբր մուտքի տոմս ներկայացնել ձեռագործի վիճակահանութեան մի տոմս, որ արժէր 5 դահ.։ Հակառակ անցեալ տարուան մի երկու ծնողների անհիմն դժգոհութեան, այս տարի բոլոր տոմսերը ծախուեցին, այնպէս որ ստիպուած եղանք մուտքի համար 2 դահ. առնել վիճակահանութեան տոմս չունեցողներից։ Երրորդ հանդէսը Յուլիս 11ին էր, որի մուտքն ազատ էր։ Այս հանդէսին տնօրէնը հրապարակային հաշուետուութիւն արաւ վարժարանի տարեկան գործունէութեան մասին. աշակերտներն արտասանեցին հայերէն, ֆրանսերէն, անգլիերէն և արաբերէն լեզուներով, ցուցադրեցին պարեր, վարժարանի երգչական խումբը երգեց Պ. Վ. Սրւանձտեանցի ղեկավարութեամբ և յառաջա-

դէմ աշակերտներին մրցանակներ բաժնեցինք ձեռագործի, երաժշտութեան, ձեռական աշխատանքի և նկարչութեան մէջ արած յառաջդիմութեան համար. իսկ երեք հոգի մրցանակ ստացան իբր առաջին աշակերտներ ամբողջ վարժարանի մէջ։ Մարզանքի խաղերը մեծ յաջողութեամբ ցուցադրուեցին յուլիսի 4ին Պ. Ս. Խանճեանի ղեկավարութեամբ և մրցութեանց մէջ յաղթական եղողները մրցանակներ ստացան, որոնց մի մասը ինքնաբերաբար նուիրած էին համակիր անհատներ և ընկերութիւններ։ Այս հանդէսին կարգապահութեան հսկում էին «Կամք» Միութեան սկաուտները։

Հրապարակային հաշւետուութեան մի ձեւ էր նոյնպէս մեր դպրոցական ցուցահանդէսը, որ կազմեցինք նաեւ այս տարի։ Անցեալ տարուան ցուցահանդէսը տեսնողները կարող են վկայել, թէ որքան մեծ յառաջդիմութիւն կար ձեռագործի, նկարչութեան և ձեռական աշխատանքների մէջ։ Նկարչական բաժինն այս տարի ցուցադրած էր շատ աւելի արժէքաւոր գործեր թէ՛ որակով և թէ՛ քանակով։ Պ. Վ. Մանավեան վերին կարգերում և Պ. Հ. Փանոսեան տարրական կարգերում աստիճանաբար արթնացնում են երեխաների մէջ սէր դէպի արուեստն ու գեղեցիկը։

Վարժարանի կրթական աշխատանքին մերձաւոր հետեւած է Հոգաբարձութիւնը յանձին իր ատենապետ Պ. Մ. Նորատունկեանի, տարւոյ ընթացքին շատ անգամ լսած է դասեր և աչքի անցըրած է գրաւոր քննութեան արդիւնքները։

Մենք այս տարուան ընթացքին չկարողացանք կատարել Պ. Ս. Պետրոսեանի 45-ամեայ մանկավարժական գործունէութեան յոբելեանը, որի մասին գրած էի անցեալ տարուան Տեղեկագրիս մէջ։ Գարունն անցաւ ընտրական պայքարների մէջ. անհնարին էր ստեղծել այն համակիր մթնոլորտը, որ անհրաժեշտ է այս կարգի գործերի համար։ Մենք ստիպուած եղանք յոբելեանը յետաձգել առաջիկայ աշնան։

Այս տարի մեր դասատուներից Պ. Զ. Պօլեան թողնում է իր պաշտօնը՝ բարձր կրթութիւն ստանալու համար։ Տնօրէնութեանս երեք տարիների ընթացքին նա կողմնակից եղաւ մանկավարժական նորոյթների, աշխատեց բարեխղճութեամբ իբրեւ դասատու, աշակերտներին եղաւ սիրելի և կարողացաւ նրանց աշխատանքի մղել, օգտակար ելք տալով նրանց եռանդին թէ՛ իրանց,



թէ՛ վարժարանի օգտին։ Նրա հեռանալը մի կորուստ է մեր գործի համար։

---

Դասատուներն այս տարի նուազ բացակայութիւն ունեցան քան անցեալ տարի (տես տախտակ No. 8)։ Նախակրթարանի 25 դասատուներից բացակայած են 21 հոգի, ընդամենը 107,5 օր, որ նշանակում է միջին հաշուով 5 օր. անցեալ տարի բացակայած էին 16 հոգի, բայց միջին հաշուով 7 օր։ Մանկապարտէզի 7 դաստուները բացակայած են 37,5 օր. որ ասել է միջին հաշուով նոյնպէս 5 օր, անցեալ տարի բացակայած էին 8 հոգի և միջին հաշուով 12,5 օր։ Բացակայութեանց նուազումն անշուշտ անդրադարձած է վարժարանի յառաջդիմութեան վրայ։

Անցեալ երկու տարիների նման՝ դասատուներն այս տարի եւս բարեխղճութեամբ աշխատեցին և շատերն ամեն կերպ օժանդակեցին վարժարանի և աշակերտութեան յառաջդիմութեան, թեթեւցնելով տնօրէնութեան ծանր աշխատանքը։ Պ. Հ. Սափրիչեան ինքնաբերաբար շաբաթական երեք պահ աւելի Ազգային Պատմութիւն աւանդեց, քան պայմանաւորուած էինք նրա հետ. Պ. Զ. Պօլեան արտասանութեան դասեր տուեց բարձրագոյն կարգի աշակերտներին և շատ օգնեց մեզ թւապատկերներ և գծապատկերներ պատրաստելով և աշխատանքի լծելով բարձր կարգերի մի քանի աշակերտ։ Այս գործին օգտակար եղաւ և մեր շրջանաւարտներից Օր. Ա. Շատախցեան։ Տիկ. Վ. Տէրպէտէրեան և Պ. Հ. Փանոսեան շարունակեցին իրենց առաւօտեան մարզանքի հսկողութիւնը նաեւ այս տարի։ Պ. Ս. Պետրոսեան պահեց հայագիտական գրադարանը և Պ. Ամրիկեան վարեց գրենական պիտոյքների վաճառման գործը։ Պ. Մ. Փափազեան շարունակեց հսկել ֆուտբոլի խաղերին և Տիկ. Զ. Պօղոսեան զարմանեց խաղերի ընթացքին վնասուած երեխաներին։ Մնացածներն օգնեցին հանդէսների կազմակերպութեան և ղեկավարութեան գործին։

Այս անձնուէր և միասնական աշխատանքը աննկատ չի մնացած հանրութեան աչքից, որ իր համակրանքն արտայայտած է

սրտաբուխ նուէրներով։ Ցաւօք եմ թէ լաւատես ինքնախաբէութեան մէջ չէք համարի ինձ, եթէ ասեմ, որ այն տարրերը, որոնք պայքարում էին իրար դէմ հանրային կեանքի ուրիշ ասպարէզներում, փորձեցին բարեկամաբար անցնել վարժարանի մօտով. ու թէեւ համակիր չէին դպրոցական ղեկավար մարմնի քաղաքական հայեացքներին, բայց այդ հանգամանքը չխանգարեց, որ աշխատեն մեր չքաւոր աշակերտների համար։ Այս տեսակէտից յատուկ յիշատակութեան արժանի է «Գեղարուեստասէր Հայուհեաց Միութեան» գործը։

Քաղաքական Ժողով, Թեմական Ժողով, Հոգաբարձութիւն, Մանկավարժական մարմին, «Աղքատախնամ», «Կամք» և ուրիշ ընկերութիւններ ու բարեմիտ անհատներ համախորհուրդ աշխատելով և մեզ նպաստելով, հնարաւոր դարձրին այն յաջողութիւնը, որին հասանք և որի պատկերը գծեցի Տեղեկագրիս մէջ։

Բոլորին յայտնում ենք մեր սրտագին շնորհակալութիւնները։

Տնօրէն
Պօղոսեան Ազգ. Երկսեռ. Վարժարանի
Ն. ԱՂԲԱԼԵԱՆ

# ՑԱՒԵԼՒԱԾ

## ԹՒԱԲԱՆԱԿԱՆ ՄՏԱՓՈՐՁԻ ԱՐԴԻՒՆՔԸ

Իբր յաւելուած օգտակար համարեցինք կցել մեր տեղեկագրին այն թուաբանական փորձերի արդիւնքը, որ կատարեցինք մեր վարժարանի մէջ այս տարի, մարտ ամսուան ընթացքին։ Վարժութիւններն առնուած են Դր. Է. Կլապարէդի գրքից, համեմատութեան եզր ունենալու համար։ Տոկոսական հաշիւներ կատարուած են նոյն հեղինակի հրահանգների համաձայն*)։

Մեր կատարած մտափորձի պայմանները տարբեր եղան քան ընդունուած է այս կարգի հետազօտութեանց համար։ Սովորաբար վարժութիւնները տրւում են աշակերտներին տպագրուած, որ հակառակ երեսով նրանք դնում են իրենց առաջ։ Փորձարկողի նշանի վրայ նրանք շրջում են տպագրած թղթերը և սկսում են գործողութիւն կատարել մինչև փորձարկողի երկրորդ նշանը, որով դադարում է աշխատանքը։ Այս մտափորձի նպատակն է իմանալ թէ մի վայրկեանի մէջ աշակերտները քանի՞ թուաբանական վարժութիւն կարող են ճիշտ լուծել։

Մենք տպագրած վարժութիւններ չունեցանք։ Կլապարէդի գրքից աշակերտներին թելադրեցինք վարժութիւնները, որ նրանք գրի առան փորձարկութեան համար տուած թղթերի վրայ։ Այնուհետեւ մի անգամ եւս կարդացինք, որ գրածները ստուգեն։ Անկասկած այս պարագան աննպաստ եղաւ արդիւնքի տեսակէտով, որովհետեւ աշակերտները եռանդի սպառում ունեցան։ Այս նախապատրաստական աշխատանքի ընթացքին մի քանի ուշագրաւ երեւոյթներ տեղի ունեցան։ Երեք-չորս աշակերտ թուերը գրելու ընթացքին փորձեցին միաժամանակ գործողութիւն կատա-

*) Տես Dr. Ed. Claparède. Comment diagnostiquer les aptitudes chez les écoliers. Paris, E. Flammarion. էջ 63—71 և 292—296։

րել՝ աւելի արդիւնք ցուցադրելու դիտումով։ Նրանց պատասխանները հաշւի չառնւեցան։ Երկու աշակերտ սխալ գործողութիւն կատարեցին՝ անուշադիր լինելով տուած հրահանգին, փոխանակ թւերն իրարից հանելու՝ գումարեցին իրար հետ։ Բաւական թւով աշակերտներ, մօտ 15 հոգի, թւերը սխալ գրեցին և ստուգման ժամանակ սխալները չնկատեցին, բայց գործողութիւնները ճիշտ կատարեցին։ Նրանց պատասխանները հաշւի առնւեցան, որովհետեւ արդիւնքը ճիշտ էր, թէեւ անուշադիր էին եղած թւերի ճիշտ գրութեան։

Փորձերը կատարւած են ճաշից առաջ երրորդ և չորրորդ պահերին։ Փորձարկութեան ենթարկւած են 11 դասարան՝ սկսած տարրական Գ.-ից։ Ամեն անգամ փորձն տրւած է երկու գործողութեան համար — գումարում-հանում և բազմապատկում-բաժանում։ Վարժութիւնները գրած ու լուծած են բաժանւած թղթերի երկու էջերի վրայ։ Մի վարժութիւնն անելուց յետոյ թուղթը շրջած են և միւս վարժութիւնն արած են նոր էջի վրայ։

Դր. Է. Կլապարէդ հրահանգում է հաշւի առնել վարժութեանց ուղիղ լուծումները։ Զիջելով այդ հաշւի կարեւորութիւնը, ես կարծում եմ, որ պէտք է հաշւի առնել նաեւ բոլոր լուծումներն առհասարակ։ Առաջին հաշիւը մեզ գաղափար է տալիս թէ երեխան մի վայրկեանի մէջ քանի՞ գումարման վարժութիւն է ճիշտ լուծում, երկրորդ հաշիւը մեզ գաղափար կը տայ թէ երեխան մի վայրկեանի մէջ ո՞րքան աշխատանք կարող է կատարել։ Որովհետեւ այլ բան է աշխատանքի քանակը և այլ բան որակը։ Եթէ երեխան 7 անգամ 8 անելով սխալւում և գրում է 42, փոխանակ 56ի, նրա կատարած մտային ճիգը նոյնքան է, որքան ուղիղ գրողինը։ Եթէ կամենանք աշխատանքի քանակը չափել՝ պէտք է նկատի առնել բոլոր լուծումները, իսկ եթէ որակը — միայն ճիշտ լուծումները։ Մեր նիւթերը մենք ամփոփել ենք զատ-զատ այս երկու տեսակէտով։

Այնուհետեւ Դր. Է. Կլապարէդի բերած թւերը ցոյց են տալիս թէ որոշ հասակի մանչ և աղջիկ քանի՞ վարժութիւն են լուծում մի վայրկեանի մէջ։ Փորձերը կատարւած են Ժընեւի վարժարանների մէջ, իսկ արդիւնքը մշակած են Institut J. J. Rousseauի վարիչները։ Հում նիւթի մշակման սկզբունքներն ուրեմն կազմում են սեռն ու հասակը։ Համեմատութեան համար



անհրաժեշտ էր նոյն սկզբունքներով մշակել նաեւ մեր փորձի արդիւնքը։ Այս պատճառով խնդրեցի Պ. Ա. Մարգարեանին մանչերի և աղջիկների զատ-զատ ցուցակներ պատրաստել և դասաւորել աշակերտներին ըստ հասակի՝ այբբենական կարգով։ Աշակերտների տարիքը ստուգեցինք մի շրջաբերական դիմումով, որ ուղղեցինք ծնողներին։ Մի քանի ծնողներ զգուշացան իրենց աղջիկների հասակը յայտնել. մենք նրանց տարիքը որոշեցինք աչքի չափով։

Միանգամ արդէն հաւաքւած նիւթը մենք մշակեցինք հիմք առնելով նաեւ ուրիշ սկզբունքներ, որ մեզ տւին ուշագրաւ հետեւանքներ։ Մեր փորձերի բովանդակ արդիւնքը ցուցադրւած էր ամավերջի հանդէսին 18 թւապատկերներով։ Դր. Է. Կլապարէդի գրքի մէջ նկատի առնւած են 8—17 տարեկան աշակերտներ, բոլորին նոյն վարժութիւններն են տրւած լուծելու։ Մենք նոյն վարժութիւնները տւած ենք 9—16 տարեկաններին, բայց համեմատութեան համար մշակած ենք 10—14 տարեկանների տւած արդիւնքը։ Աւելի մեծերն ու աւելի փոքրերը շատ քիչ էին՝ հաշւի առնելու համար։

Մեր թւապատկերները հետեւեալ խնդիրներն են պարզում։ Ութ տախտակի վրայ պարզւած է թէ փորձարկութեան ենթակայ 11 դասարաններից ամեն մէկը քանի՞ վարժութիւն է լուծած ընդհանրապէս և քանի՞սը ճիշտ է լուծած։

Երկու տախտակ պարզում են թէ տարրական, միջին և բարձր կարգերը ի՞նչ մասնակցութիւն են ունեցած վարժութեանց լուծման մէջ ընդհանրապէս և ճիշտ լուծման մէջ մասնաւորապէս։ Այդ տախտակը մեզ տալիս է նաեւ բոլոր թէ ճիշտ և թէ անճիշտ լուծումներից ընդհանուր քանակը՝ չորս գործողութիւնից զատ-զատ։

Մի տախտակ մեզ տալիս է մտափորձի ընդհանուր ամփոփումը։

Այնուհետեւ, համեմատութեան համար, կազմւած է 4 տախտակ չորս գործողութեանց համար, ուր համեմատութեան են դրւած մեր և Ժընեւի աշակերտները ըստ սեռի և հասակի և ըստ վարժութեանց ճիշտ լուծման։

Մի տախտակ, ուր համեմատութեան է դրւած մեր վարժարանի 10—14 տարեկան մանչերի և աղջիկների կարողութիւնը

թուական վարժութեանց լուծման մէջ։

Վերջապէս երկու տախտակ պարզում են մեր վարժարանի աշակերտութեան կարողութիւնը թուական վարժութեանց լուծման մէջ առանց սեռի տարբերութեան, այսինքն թէ մի վայրկեանի մէջ քանի՞ հոգի 1—5 վարժութիւն են լուծած, քանի՞սը 5—10, քանի՞սը 10—15 և քանի՞սը 15—20։ Մեծագոյն չափը որին հասած են մերոնք մի վայրկեանի մէջ 20 վարժութիւն լուծելն է։ Ժընեւի աշակերտութեան մէջ 14 տարեկան աղջիկները միայն, այն էլ հանման գործողութեան մէջ, հասած են մինչեւ 23, բայց այս մասին խօսք կը լինի վարը։

Վերլուծելով «կարգերի մասնակցութեան» տախտակը, մենք տեսնում ենք, որ գումարման գործողութիւն կատարած են 283 հոգի, հանման՝ 278 հոգի, բազմապատկման՝ 291 հոգի և բաժանման՝ 289 հոգի։ Գործողութիւններն ինչպէս վերն ասի, զոյգ-զոյգ են կատարուած. մասնակցողների թւերի տարբերութիւնը պէտք է բացատրել նրանով, որ մի քանի աշխատանք որեւէ պատճառով նկատուած են անպէտք՝ հաշուարկութեան համար։ Գումարման և հանման մասնակցողների թիւը պէտք է նոյն լինէր, այսինքն 283, բայց հանումին մասնակցողները 5ով պակաս են։ Նոյնը պէտք է լինէր և հետեւեալ երկու գործողութեանց մասնակցողների թիւը, քանի որ երկու փորձն եւս ամեն մի դասարանում կատարուած են նոյն օրը և նոյն ժամին, նրանց տարբերութիւնը 3 է։ Երկու զոյգ գործողութեանց մասնակցողների թիւն եւս տարբեր է. 283 և 289։ Երկու փորձերը կատարուած են տարբեր օրեր, ուստի նկատուած 6 հոգու տարբերութիւնը պէտք է բացատրել աշակերտների բացակայութեամբ։

Գումարման գործողութիւն կատարող 283 հոգուց մինչեւ 5 վարժութիւն լուծած են 93 հոգի, մինչեւ 10 վարժութիւն 160 հոգի, մինչեւ 15՝ 24 հոգի և մինչեւ 20 — 6 հոգի։ Մեծագոյն մասն ուրեմն լուծում են 5—10 վարժութիւն։

Հանման գործողութիւն կատարող 278 հոգուց մինչեւ 5 վարժութիւն լուծած են 40 հոգի, մինչեւ 10 վարժութիւն 167 հոգի, մինչեւ 15 — 65 հոգի և մինչեւ 20 — վեց հոգի։ Այստեղ եւս մեծագոյն մասը լուծում է 5—10 վարժութիւն։ Մինչեւ 10 գումարման վարժութիւն լուծած են 253 հոգի, իսկ հանման վարժութիւն 207 հոգի. բայց մինչդեռ գումարման մինչեւ 15 վար-



ժութիւն լուծողները 24 են, հանման նոյնքան վարժութիւն լուծողները 65 են, հետեւապէս հանման վարժութիւն լուծելն աւելի դիւրին և արագ է աշակերտի համար, քան գումարման վարժութիւն լուծելը։

Բազմապատկման գործողութիւն կատարող 291 հոգուց մինչեւ 5 վարժութիւն լուծած են 209 հոգի, մինչեւ 10 վարժութիւն 82 հոգի։ Դրանից աւելի վարժութիւն լուծող չկայ մի վայրկեանի մէջ։

Բաժանման գործողութիւն կատարող 189 հոգուց մինչեւ 5 վարժութիւն լուծած են 268 հոգի, իսկ մինչեւ 10 վարժութիւն 21 հոգի։ Տասից աւելի վարժութիւն լուծող չկայ։ Բազմապատկում աւելի դիւրութեամբ են կատարում քան բաժանում, քանի որ մինչեւ 15 բազմապատկման վարժութիւն լուծող 82 հոգի ունինք, մինչդեռ նոյն չափով բաժանման գործողութիւն կատարողները 21 հոգի են։

Նկատենք նաեւ, որ մէկ վայրկեանի մէջ գումարում և հանում աւելի արագ են կատարում քան բազմապատկում և բաժանում, առաջին երկու գործողութիւնից մինչեւ 15 և մինչեւ 20 վարժութիւն լուծողներ կան՝ առաջինից 30, երկրորդից 71 հոգի, մինչդեռ նոյն քանակով բաժանման և բազմապատկման գործողութիւն կատարող բնաւ չկայ։ Եւ հասկանալի է, վերջին երկու գործողութիւններն աւելի բարդ են, քան առաջին երկուսը։ Նոյն երեւոյթը նկատելի է և Եւրոպայի աշակերտութեան մէջ։

Վերի թւերը վերաբերում էին առհասարակ վարժութեանց լուծման։ Քննելով հետեւեալ տախտակը, որ վերաբերում է վարժութեանց ճիշտ լուծման՝ մենք կը տեսնենք, որ գումարման ճիշտ գործողութիւն կատարող 283 հոգուց մինչեւ 5 վարժութիւն լուծած են 129, մինչեւ 10 վարժութիւն 141, մինչեւ 15 — 8 հոգի, մինչեւ 20 — 5 հոգի։ Տասից բարձր վարժութիւն լուծողները, որ 30 հոգի էին, դառնում են 13 հոգի իբր ճիշտ լուծող։ Այսպիսով կարելի է ասել, որ աշակերտների մեծագոյն մասը ճիշտ լուծում է 1—10 խնդիր և մինչեւ 10 աւելի շատերն են լուծում՝ 141 հոգի, քան մինչեւ հինգ՝ — 129 հոգի։

Նոյնը պէտք է ասել հանման վարժութեանց համար։ 10—20 վարժութիւն լուծումները 71 էին, մինչ դեռ նոյն քանա-

կով ճիշտ լուծողները 53 են, մինչեւ 15 լուծողները 49 հոգի են, իսկ մինչեւ 20 լուծողները՝ 4։ Մնացած բազմութիւնը լուծում է 1—10 խնդիր, մինչեւ 5 վարժութիւն լուծում են 60 հոգի, մինչեւ 10 վարժութիւն 164 հոգի։ Այս մեծ տարբերութիւնը վարժութեանց ճիշտ լուծման մէջ նորից հաստատում է վերը յայտնած կարծիքը, թէ հանման գործողութիւնը մերոնք աւելի շատ և աւելի արագ են կատարում։

Բազմապատկման գործողութեան ճիշտ կատարումին գալով՝ մենք տեսնում ենք, որ մինչեւ 5 վարժութիւն լուծում են 252 հոգի, իսկ մինչեւ 10 վարժութիւն 39 հոգի, մինչդեռ մինչեւ 10 վարժութիւն կատարողները 82 հոգի էին։ Այսպիսով կարելի է ասել, որ ընդհանրապէս բազմապատկման գործողութիւն ճիշտ կատարում են մինչեւ 5 հատ։

Նոյնը պէտք է ասել բաժանման մասին։ Մինչդեռ մինչեւ 10 բաժանման գործողութիւն կատարողները 21 հոգի են. նրանց թիւը դառնում է 7, երբ նկատի ենք առնում վարժութեանց ճիշտ լուծումը։ Հետեւապէս բաժանման գործողութիւնն եւս մինչեւ 5 միայն կատարում են ճիշտ։

Ընդհանուր առմամբ ուրեմն կարող ենք ասել, որ մեր վարժարանի աշակերտները մի վայրկեանի մէջ կատարում են մինչեւ 10 գումարման և հանման գործողութիւն և մինչեւ 5 բազմապատկման և բաժանման*)։

Մեր կատարած մտափորձի ընդհանուր ամփոփումին գալով՝ տեսնում ենք (տախտակ No. 3), որ կատարուած է գումարման վարժութեանց 1922 լրիւ լուծում, որոնցից 1675 են ճիշտ, այսինքն 82 առ հարիւր**)։ Հանման վարժութեանց լուծում կատարուած է 2351, որոնցից 2176 են ճիշտ, այսինքն 92,5 առ հարիւր. բազմապատկման 1400 վարժութիւն է լուծուած, որոնցից 973 ճիշտ, այսինքն 70 առ հարիւր և բաժանման 837 վար-

*) Գումարման գործողութեան ժամանակ գումարում են երեք հատ երկանիշ թիւ. հանման ժամանակ եռանիշ թւից հանում են եռանիշ թիւ. բազմապատկում են քառանիշ թիւ միանիշ թւով և բաժանում են քառանիշ թիւ միանիշ թւով։

**) Ասում ենք «լրիւ լուծում», որովհետեւ կիսատ մնացած գործողութիւնները հաշւի չեն առնուած։



ժութիւն է լուծուած, որոնց 559 ճիշտ են, այսինքն 66,8 առ հարիւր։ Թէ լուծումներն ընդհանրապէս և թէ ճիշտ լուծումները քանակի կարգով այսպէս են դասաւորւում. ամենից աւելի հանման լուծումներ, ապա՝ գումարման, յետոյ բազմապատկման, վերջը բաժանման։ Նոյն համեմատութիւնն է և տոկոսների մէջ։ Եղած 6510 լուծումներից ճիշտ են 5383 հատը, որ ասել է 86,6 առ հարիւրը։ Օտար երկրների աշակերտութեան վերաբերող թւական տեղեկութիւններ չունեմ ձեռքիս տակ՝ բաղդատելու համար մերոնց նրանց հետ և չեմ կարող ասել թէ այս արդիւնքը գոհացուցի՞չ է արդեօք։ Նկատի ունենալով սակայն, որ եւրոպական վարժարանների մէջ սովորաբար աւանդւում են «արագ հաշւարկութիւն», որ սակայն չկայ մեր վարժարանում, մինչդեռ փորձի նպատակն է պարզել արագ և ճիշտ լուծման աստիճանը, նկատելով նաեւ որ մերոնց ու նրանց տուած արդիւնքի տարբերութիւնը չափազանց մեծ չէ, պէտք է կարծել, որ այս արդիւնքը գոհացուցիչ է։

Գալով լուծած վարժութեանց չափերին, մենք տեսնում ենք, որ ընդհանրապէս 5—10 վարժութիւն լուծողները գերակշռում են թէ՛ առհասարակ լուծումների և թէ՛ ճիշտ լուծումների մէջ, առաջին դէպքում տալով 49 առ հարիւր, երկրորդ դէպքում 48 առ հարիւր։ Մինչեւ 20 վարժութիւն լուծողները 3 առ հարիւր են երկու դէպքում եւս։ Մինչեւ 15 վարժութիւն լուծողները փորձարկուածների 17 առ հարիւրիւրն են կազմում թէեւ 13 առ հարիւրն է միայն, որ ճիշտ են լուծում։ Իսկ մինչեւ 5 վարժութիւն լուծողները թէեւ 31 առ հարիւր են կազմում, բայց երբ նրանց աշխատանքը գնահատում ենք ճշտութեան տեսակէտով, նրանց տոկոսը բարձրանում է մինչեւ 36։

Քննելով 10—14 տարեկան աղջիկների և մանչերի կարողութեանց համեմատութեան տախտակը (թիւ 4) մենք տեսնում ենք, որ թւաբանական վարժութեանց լուծման մէջ մանչերն ընդհանրապէս աւելի զօրաւոր են քան աղջիկները։ Վերջին օրինակի մէջ մենք գումարած ենք 10—14 տարեկան աղջիկների և մանչերի տուած արդիւնքը զատ-զատ, որ այս տարբերութիւնն աւելի ցայտուն դարձնենք։ Լուծումների նւազագոյն քանակ ուղղ աղջիկների և մանչերի մէջ թէեւ տարբերութիւն կայ, բայց շատ մեծ չէ։ Այն մանչերը որ մինչեւ 6 վարժութիւն են լուծած

գումարման, մինչեւ 8՝ հանման, մինչեւ 4՝ բազմապատկման և 1՝ բաժանման — 8 նիշով գերազանց են աղջիկներից. այդ գերազանցութիւնը դառնում է 4՝ կարողութեանց հետեւեալ կարգի համար։ Բայց այս տարբերութիւնը շեշտւում է հետեւեալ երկու կարգերի համար, որ կարող ենք անւանել «բարձր» և «բարձրագոյն». բարձր կարողութիւն ունեցող աղջիկների և մանչերի տարբերութիւնը 17 նիշ է, իսկ բարձրագոյն կարողութիւն ունեցողների տարբերութիւնը՝ 32։ Կարելի է ասել, որ հասակ առնելով՝ մանչերն աւելի հաշւարար են դառնում, քան աղջիկները։

Խուսափելով ծախսերից մենք տպագրութեան չենք տալիս մեր տախտակներից 10 հատ, բայց նրանց վերլուծութիւնն անհրաժեշտ ենք համարում. Այդ տախտակներից երեսի վրայ նշանակւած է թէ տարրական, միջին և բարձր կարգերը ինչ մասնակցութիւն ունեն վարժութեանց լուծման մէջ ընդհանրապէս և ճիշտ լուծման մէջ մասնաւորապէս և վարժութեանց լուծման ի՞նչ կարողութիւն են հանդէս բերում.

